


6390



ԺԱՌԱԲՈՒՅԹ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

894.362

4-50

894.362

Ս Տ Մ ՈՒ Բ Հ Ր Հ

-6 NOV 2011

ԹԵՂԱՄԻՆԵՐԸ



(639) 0

22952-59

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵԿԱՆ

1 9 3 4

31 JUL 2013

73.895

894.3

Պատ. Խմբագիր՝ Ե. Զովուրյան
Տէև. Խմբագիր՝ Տ. Խաչվանեյան
Լեզվ. Խմբագիր յեկ պր. Դար. Հայոցընկերություն

1

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և կոլեկտիվ անտեսությունների՝ անհատական տնտեսություններից՝ ունեցած առավելությունների մասին մի ժամկց ավելի տեվող գեկուցումը վերջացել եր: Այս գեկուցման մեջ հարուցված խնդիրներն եւ ավելի լուսաբանելու համար տրված հարցերի պատասխաններն ստանալուց հետո, գեկուցումը լսելու համար չքնշանի բոլոր կողմերից կանչված գյուղական ակտիվը ցըմել եր, իսկ գյուղական ակումբի սրահը՝ դատարկվել:

Սրահում միայն Ռյուստեմն եր մնացել: Զեկուցման ընթացքում զեկուցողի կողմից ցույց տրված թվերի աղյուսակների և գյուղատնտեսության մեջ գործածվող տեսակ-տեսակ մեջենաների նկարների առաջ կանգ առած նա մասածում եր:

Ռյուստեմը գյուղատնտեսությունը նոր ձեռով կազմակերպելու գործը սովորել եր այսորվա զեկուցումից, և դրա համար չափազանց գոհ եր:

Զեկուցման ժամանակ հեռվից տեսած թվերին և գյուղատնտեսական մեջենաներին այժմ մոտիկից եր նայում և չեր ուզում հե-



Հանձնված ե արտադրության 25 մայիսի 1934 թ.

Ստորագրված ե տպագրության 20 ոգոսության 1934 թ.

Դաշտին 8568 իրաւություն պատվեր 992 ամբաժ 2000

Պետրասի տպարան, Յերեվան

ոանալ, նրանցից բաժանվել: Հանկարծ, ինչ-
վոր բան մտածեց, ուզեց այդ թվերը գրել և
միասին տանել: Զեռքը տարավ կողքի գրպա-
նը և հանեց այն հուշատետրը, վոր յերեք
տարի առաջ բաժանված եր Խորհուրդների
համագումարին մասնակցող պատգամավոր-
ներին: Ինքն ել այդ պատգամավորներից մեկն
եր յեղել: Այժմ այդ հուշատետրի վրա կեղա-
եր կապել:

Թյուստեմը նայեց հուշատետրի այս ու
այն յերեսին, թղթատեց և բաց արեց մի սպի-
տակ եջ: Հետո մատիտը փնտռեց, բայց
չգտավ: Թյուստեմը չուց իր նոսր հոնքերը,
մտածեց և քիչ հետո հիշեց, վոր մատիտը
կոռպերատիվում Գյուլիզարին եր տվել:
Թյուստեմը դեռ առավոտյան, շրջանի կենտ-
րոնը չեկած, մի րոպե վոտքի վրա հանդի-
պել եր գյուղի կոռպերատիվը: Այստեղ Գյու-
ղպարը գյուղացիներին արշինով ապրանք եր
բաց թողնում: Տված ապրանքները գյուղա-
ցիների կոռպերատիվ գրքույկներում արձանա-
գրեցիս, հանկարծ Գյուլիզարի մատիտը
կոտրվեց: Գյուլիզարը մի բան փնտռողի կամ
մեկից ոգնություն սպասողի պես, շվարած
այս ու այն կողմ նայեց:

Թյուստեմն ականատես եր նրա այդ վի-
ճակին և անմիջապես, նույն րոպեյին, առաջ
անցավ և իր սուր մատիտը նրան տալով
սսաց:

— Վերցրո՞ւ, թերեւ այս ավելի լավ զրի:
Գյուլիզարը գոհունակությամբ լի աչքերը
Թյուստեմի կողմը դարձրեց և ժպտաց.

Գյուլիզարի թափանցող նայվածքը, շըր-
թունքների ատլասը, լույսը... նրա ժպտա-
լու ժամանակ յերեացող ատամները դեռ
այժմ ել Թյուստեմի աչքի առաջն եյին այն-
պես, ինչպես այսոր առավոտ տեսած լիներ:

Վոչ, վո՞չ... Թյուստեմը նրանից ավելի
գեղեցիկ կին չի ճանաչում, չգիտի: Միայն
գեղեցկությունը չի, խելքն ել... իմաստու-
նությունն ել... նա նմանը չունի: Ո՞վ ե ա-
սում, թե միայն բեյի աղջիկը խելացի և ուշիմ
կլինի... Գյուլական մասսայի, նաև չքավոր
մասսայի միջից դուրս յեկած բայայի աղջի-
կը՝ Գյուլիզարը տասը բեյի աղջիկ արժե:
Թյուստեմն այս մտածումների մեջ եր, յերբ
հանկարծ սթափվեց: Նա ինքն իրենից ամա-
չեց:

Հասարակությունը գեկուցումը լսել ու
ցրվել եր, մինչդեռ ինքը մի լուրջ զեկուցու-
մից հետո, նոր կյանքի տեսարանը պատկե-
րող թվերի և գյուղատնտեսության մեջ
նոր փոփոխություններ առաջ բերելու կոչված
մեքենաների նկարների առաջ կանգնած՝ ի՞նչ
եր հիշում, ի՞նչ եր մտածում:

Թյուստեմն ակումբից շտապ դուրս յե-
կավ:
Որը մթնեց: Յերեկվանից փչող քամին

Հանդարտել եր: Քիչ առաջ դետին խոնարհվող
ծառերի միայն տերեւներն եյին թեթև շարժ-
վում:

Պյուստեմն ակումբից դուրս գալուց հետո
կանդ առավ: Մի ըոպե մտածեց: Դյուզտո՞ւն
գնա, թե՞ հեռուներից յեկողների համար
Մջկենտրոնում դտնվող դյուզացու տանը
մնա: Վերջապես վորոշեց դյուզտուն վերա-
դառնալ և քայլերն ուղեց դեպի կայարան:

Կայարանի պլատֆորմի վրա բացվող
դասն վերեւմ ելեկտրական լույսը կայարանի
առաջ գանվող ծառերի բարձր տերեւների
միջից փարոսի նման յերբեմն յերեսում եր,
յերեմն թագնվում դանդաղորեն շարժվող
տերեւների մեջ, ու չեր տեսնվում:

Պյուստեմի դյուզը Սաֆալուն եր, գնաց-
քով 20 ըոպե, իսկ կայարանից հետո՝ 2 կիլո-
մետր հեռավորության վրա:

Յեթե մի գնացք գա, կնետվեմ մեջը,
կդնամ—մտածում եր Պյուստեմը: Մարդա-
տար գնացքների ժամանակը չեր, և այդ պատ-
ճառով ել կայարանը դատարկ եր: Գնացքին
սպասող չկար:

Պյուստեմն ել մտադիր չեր մարդատար
գնացքին սպասելու: Պյուստեմը սովորաբար
վարժված մարդուտային գնացքներով գնա-
լուն՝ բեռնատար կամ նավթ տանող գնացքի

գալն եր ցանկանում: Հեռվից յերկաթուղու
աղմուկը գալիս եր: Բյուստեմը վոր տեսավ
Բագլի կողմից յեկող գնացքը՝

— Մեր գործը հաջող ե գնում, — ասաց
և ուրախացավ: Պյուստեմը դիմեր, վոր յեկող
գնացքը կայարանում կանդ ե առնելու, և
ակսեց պլատֆորմում ման գալ:

Կայարանի ծառայողները գնացքն ընդու-
նելու և ճանապարհ գնելու համար իրենց ձեռ-
քի լավտերները շարժելով՝ այս ու այն կողմն
եյին ընկնում, յերկաթուղու հատուկ նշան-
ները ցույց տալիս, իրենց պարտականու-
թյուններն եյին կատարում:

2

Պյուստեմը ՍաՓալու դյուզի չքավորնե-
րից Ղուրբան Քեշու տղան եր: Պյուստեմը
զեռես 25 տարեկան չկար: Նրա ծննդյան
թվականը վոչ մի տեղ արձանադրված չեր, և
ձիշտ տարիքը վոչ վոք չգիտեր: Նրա տարի-
քի մասին միայն հայտնի յեր այն, վոր յերը
Մուրադ բեյը վորսի յեր գնացել ու գիշերն
ավագակների հանդիպել, Պյուստեմը 2-3 տա-
րեկան եր: Այս անցուղարձերը հիմա ել նույ-
նությամբ շատերն են հիշում: Այժմ, յերը
խոսք ե բացվում, պնդում են, վոր
այդ դեպքը տեղի յե ունեցել սրանից
20-25 տարի առաջ: Մասնավորապես Պյուս-
տեմի հայրը՝ Ղուրբան Քիչին այս դեպքի

Հերոսն ե յեղել և բոլոր մանրամասնությունները լավ գիտե: Ինչպես յերեկ տեղի ունեցած դեպք, լավ ե հիշում և, յերբ տեղը դա, գոռունակությամբ կպատճի:

Սակայն յեթե ուզում ենք Ղուրբան Քիշու մասին անարդար չլինել, մասնավորապես պետք ե չեշտել, վոր յերբ նա պատմում ե այդ դեպքի մասին, նա իր հերոսական դերի մասին չառ համառոտ ե հիշում:

Այս, այն ժամանակ Ղուրբան Քիշու յերիտասարդ որերն եյին: Նա հող չուներ, վոչ ել անասուն: Միայն մի խրճիթ ուներ և ինքն ել չքափոր գյուղացի, Սաֆալու գյուղի՝ Մուրադ բեյի դռանը ծառա յեր: Մուրադ բեյի ծիերն եր խնամում, կառքն եր լծում, այդում և բամարկի դաշտերում աշխատում. վերջապես ամեն տեսակի գործ կատարում եր:

Արդեն Ղուրբան Քիշին անձարակ չեր: Վոչ մի գործում նա անկարողություն ցույց չեր տալիս:

Մի որ Մուրադ բեյն իր դնած ծին հյուրերին ցույց տալու համար պատշգամբից Ղուրբանին կանչեց և հրամայեց:

— Աղա՛, այս Ղուրբան, նոր յեկած ծին մի գործ հանիր:

Ղուրբանը ծին չտապ թամբեց և բակը հանեց:

Մուրադ բեյը, յերբ այս տեսավ, բարկացավ.

— Աղա՛, յես քեզ ասի՞՝, թե «թամբիր»: Ծո՛ւտ. թամբը վա՛ր առ և մերկ ցույց տուր: Մուրադ բեյի հետ պատշգամբը կանգնած է անձ և ծին գիտել ցանկացող հյուրերից մեկը ծիծաղելով ասել եր.

— Այս Մուրադ բեյ, ես քո Ղուրբանը բոլորովին հիմար, խելապակաս ե յեղել: Յեվ բոլորն ել սկսել եյին յերկար ծիծաղել:

Այդ որից ի վեր, յերբ Ղուրբանին մի գործ եր հանձնվում, կամ նա մի ծառայության եր ուղարկվում, «խեղապակաս»-ն ել թյան եր ուղարկվում, «խեղապակաս»-ն ել թյան եյին ովելացնում: «Աղա՛, տե՛ս, «խեղապակաս մի՛ լինի»: «Այս Ղուրբան, այս խեղապակաս Ղուրբան, ծիերը պատրաստի՛ր», կամ «Այս Ղուրբան, խեղապակաս Ղուրբան, հրացանները սրբի՛ր, վորսի յենք դնալու»:

Այսպիսի խոսքերը վերջ չունեյին: Ճարպիկ, հանրամիտ, աշխատասեր Ղուրբանին «խեղապակաս» անուն տալը նրան բնկանում, սիրտը ճնշում, ցավ եր պատճառում: Սակայն սեփականություն չունեցող բեյի դռանը ծառայություն անելու ստիպված Ղուրբանն այս բոլոր անարգանքները տանում եր:

Միայն պատահական մի դեպք նրա անվան վրայից սրբեց այս տղեղ և անվայել անունը:

Ազնան առաջին որերն եյին: Արեք ճառագայթներն ուժաթափ եյին յեղել և անկարող եյին տաքացնել:

Ծառերի վրա դեղնող տերեների թիվն որեցոր ավելանում եր: Նրանք գետին եյին թափվում, և յերեմն-յերբեմն վիչող քամին տերեները խշրտացնելով ավլում—այս ու այն անկյունն եր հավաքում:

Մուրադ բեյի տանը նորից հյուրեր կային: Ընդհանրապես Մուրադ բեյի որն այսպիսի հյուրընկալությամբ եր անցնում: Տընտեսության գործերը գյուղացիների աշխատանքով առաջ եյին գնում, և բեյից նրանք ժամանակ չեյին պահանջում: Մուրադ բեյը հարեան բեյերի մոտ, կամ թե նրանք Մուրադ բեյի մոտ թղթախաղով ու խմելով ժամանակ եյին անցկացնում, իսկ յերբ դրանից հոգնում եյին, վորսի եյին գնում:

Հյուրերը վորոշեցին ճաշից հետո վորսի գնալ և մի քիչ հանգստանալու համար պառկեցին: Վորսի պատրաստության բոլոր գործերը հանձնարարվեցին Ղուրբանին: Ղուրբանը ճաշից հետո պառկող բեյերի առաջ կանգնած՝ նրանց բոլոր հանձնարարություններն ուշագրությամբ լսեց: Ձիերը պատրաստելու մասին հարկ յեղած հրամանները տալուց հետո, Մուրադ բեյն ավելացրեց.

— Դու ել ես գնալու: Մի քանի դդալ, ա-

ման ել վերցրու: Վորսի տեղը մեզ հովվի կերակուր կամ նման մի բան կպատրաստես, բայց տե՛ս, Ղուրբան, այս հյուրերի մոտ ել խելապակաս չլինես, հա՛:

Այս խոսքը Ղուրբանի համար հայշոյանքից ել վատ եր: Ղուրբանը գլուխը կախեց և վոչ մի խոսք չասաց: Սակայն Մուրադ բեյի վերջին խոսքից նրա սրտաբեկ լինելը չտեսնել անկարելի յեր:

Ամբողջ ճանապարհի ընթացքում բոլոր կատակների, ցինիկ սրախոսությունների առարկան Ղուրբանն եր: Ղուրբանը լոռութամբ այդ կատակները և սուր խոսքերը լսում, բոլորը գեղահատի նման կուլ ե տրավիս:

Վերջապես, փոքրիկ մի անտառի ծայրում, «Դաշկըն» չայի մոտերքում Մուրադ բեյը ձին պահեց և ընկերներին դառնալով ասաց.

— Տեսե՞ք, յես ասում եմ՝ այստեղ մնանք,—և առանց ընկերների կարծիքն ու պատասխանն սպասելու, ավելացրեց—ուրեմն այստեղ մեր «բազան» կլինի: Հետո յերեսը շուռ տալով դեպի Ղուրբանը, ասաց.

Ղուրբան, ել մի՛ դանդաղի, այստեղ ել բոլոր պատրաստությունները տես:

Դեռ արեւ մայր չեր մտել. ծառերի հետեւը պահված արեւը ջերմության ուժը կորցրած ճառագայթները ցանցառ տերեների միջից խաղացնում եր: Չորս կողմը լուռ եր:

Այդ լոռությունը յերբեմն խանդարում եյին
թռչունների կանչերը և մոտիկից հոսող
«Դաշկընի» տիպուր ձայնը:

— Ա՛հ, իսկապես, Մուրա՛դ բեյ, ի՞նչ
լավ տեղ ընտրեցիր, այստեղ վորքա՞ն զվար-
ճալի յե, — ախ քաշելով ասաց ֆերուզ բեյը,
վոր մինչև այդ չեր խոսել և բերանից պապի-
ռոսը չեր դցել:

Այդ լսելուն պես Զեվադ բեյը, վոր Ղուր-
բանին յերբորդ անդամ խելապակաս եր ան-
վանել և յուրաքանչյուր այդ ասելուց շատ
գոհ եր մնացել, ասաց.

— Յես ել քեզ հետ համաձայն եմ: Ճիշտ
է, այս տեղը ուրիշ հաճույք ունի: Այժմ, Ֆի-
բո՛ւզ, մի՛ ամաչի, բանաստեղծություններդ
գրի՛ր... տեղն ե. բանաստեղծություն գրելու
համար այսպիսի տեղ ե հարկավոր:

Ծիծաղեցին: Զեվադ բեյին բանաստեղ
անվանելու համար ֆիրուզ բեյն ինքն ել ծի-
ծաղեց:

Մուրադ բեյը ճին առաջ քշեց:

— Հա՛, ասա, Ֆիրո՛ւզ բեյ, են բանաս-
տեղծությունը ի՞նչպես եր...

«Թռավ բախտո, սիրտս գերեզման յեղավ,
սրտիս կրակը վառում ե աշխարհը».

Այսպես չե՞ր: Յեկ եստեղ ստեղծագոր-
ծիր, բանաստեղծների նկարագրած տեղերը
սրանից ավելի գեղեցիկ չեն...

Զեվադ բեյը քահ-քահ ծիծաղելով.

— Թող մի քիչ հանդստանա, վորսի դուրս

դա, նրանից հետո ֆիրուզ բեյն անշուշտ կդա,
լորի:

Նորից ծիծաղեցին:

Ղուրբանը ճիռուց իջավ, ճին կապեց ծա-
ռին և առանց զանդաղելու սկսեց իր աշխա-
տանքը: Մեծ և ճյուղազարդ չինարի ծառի
տակ փալասը փոեց, խուրջինը բաց արեց և
աղաների հանձնարարած արաղի ու գինու
շշերը, հատուկ խնամքով պատրաստած ա-
ղանդիները հանելով՝ սկսեց սեղանի պատ-
րաստություն տեսնել:

Մուրադ բեյն ընկերներին դառնալով ա-
սաց.

— Թող Ղուրբանը մեզ համար նախընթ-
րիք պատրաստի, մենք ել այս անտառի մեջ
մի քիչ ման գանք:

Յերեքն ել ճիերը քշեցին դեպի անտառը,
մի ըովել հետո անտառը վորսորդներին թագց-
րեց իր ծառերի մեջ: Ճիերի վոտնաձայնը ևս
քիչ հետո անլսելի դարձավ. այդ ազդանշում
եր, թե վորսորդները հեռացել եյին: Նորից
չորս կողմը լոռություն տիրեց:

Ղուրբանը սեղանը պատրաստելուց հետո
յեկավ գետակի յեզերքը, քարերից մի ոջախ
սարքեց և անից բերած պղնձե ամանը մի քանի
անդամ գրեց ու հանեց: Խշոցով հոսող ջուրը
շրջակա լոռության մի այլ ներդաշնակություն
եր տալիս: Վերջապես ոջախի գործն ավար-
տեց: Այլևս մնում եր աղաների հանձնարա-
տեց:

ըած «Հովվի կերակուր»-ի համար կաթ ճարել։
Ղուրբանի համար կաթ ճարելլ դժվար դորձ
չեր։ Նա այս վայրերին լավ ծանոթ եր։ Մեր-
ձակայքում անպայման քոչվորներ կային։
Ղուրբանն այս քոչվորների վրանը գնալով՝
պետք է կաթ առներ և աղաների համար «Հով-
վի կերակուր» պատրատեր։ Սակայն նախ
պետք եր սպասել աղաների վերադարձին։

Ոջախում լարսված չոր փայտի վոստերը
վառվում և իրենց բոցով ոջախի շուրջը կարմ-
րացնում եյին։

Չինարի տակ պատրաստած սեղանը սպա-
սում եր աղաների վերադարձին։

Ղուրբանն ել մի կողմ նստած՝ մեղմիկ յեր
գում եր։

Յերբ վորսորդները վորսից վերադառն,
Ղուրբանն չտապ կերպով բեյերի ձիերը կա-
պեց մստակա ծառերին և նրանց առաջը խոռ-
դցեց, հետո իր պառավ ձին հեծնելով՝ դնաց
կաթ մնտռելու։



Մուրադ բեյն ու ընկերները խմիչքի շնե-
րից մի քանիսը դատարկել և նստելուց հոգ-
նած՝ պառկել եյին։ Որը շատ եր մթնել։

Մութ յերկնօքի հատուկտոր աստղերը վոր-
որդներին դիտում, միմյանց աչքով անում
ու ծիծաղում եյին։

Դետակի յեղերքում վառված ոջախից քիչ

առաջ բարձրացող բոցը նվազել և հետղհնութե-
մարել եր։

Հանկարծ ձիերը ձայն լսեցին և ականջ-
ները սրեցին, սկսեցին նայել դեպի ձայն յե-
կած կողմը։ Ձիերից մեկը խրխնջաց։ Այդ
ձին Մուրադ բեյի նժույգն եր, վոր հասկացել
եր, թե յեկողը Ղուրբանն է։

Վորսորդները, յերբ տեսան Ղուրբանի վե-
րադարձը, ուրախացան և հարցըին։

— Կաթ ճարեցի՞ր։

— Ճարեցի, վերցըել եմ։ Մի քիչ ել սեր
առա, պատասխանեց Ղուրբանը։

Մուրադ բեյը գոհ մնաց և ասաց.

— Տե՛ս, այդ լավ ե։ Ապրե՛ս, յերեվում
ե, վոր չես ուզում խելապակաս լինել։ Հետո
իր խոսքը շարունակելով՝ Մուրադ բեյը ավե-
լացրեց, — Հիմա այդ կաթով ի՞նչ ես մտադիր
անելուարա։ Բայց մեզ ել մի թեյ պատրաս-
տիր։

Զեվադ բեյը գլուխը բարձրացրեց և Մու-
րադ բեյին դառնալով՝

— Այ, Մուրադ բեյ, դու ժամանակ վորո-
շի, յեթե վոչ՝ նրա թեյ պատրաստելը յերկար
կտեի. Թեյ պատրաստելու համար նրան մի քա-
նի ժամ ժամանակ ես տալու։

Մուրադ բեյը ծիծաղեց և պատասխանեց.

— Ճիշտ ե, ալետք ե ժամանակ վորոշվի։
Տե՛ս, Ղուրբան, «քանի ժամը» Զեվադ բնյին
թող մնա, բայց յեռ քեզ կտամ... Այստեղ

Մուրադ թեյլ մի քիչ մտածեց և հետո.— յետ
քեզ 20 րոպէ ժամանակ կտամ: Կամ պիտի
հաստատես, վոր ճարագիկ և արագաշարժ ես,
կամ թե՝ խելքապակս: Դե՛, առաջ:

Բեյերն իրենց մեջ դեռ մի քանի խոսք ել
ասացին, բայց Ղուրբանը չլսեց: Թեյլ պատ-
րաստելու և կաթը տաքացնելու համար նա ո-
չափին մոտ գնաց:

Յերբ թեյլ պատրաստվում եր, Մուրադ
թեյլ թեթև յերգում եր, Զեվադ թեյլ խորդա-
լով քնում եր: Իսկ «բանաստեղծը» կոնակի
վրա յերկարած՝ աչք անող աստղերի դասավո-
րությունն եր դիտում և վերհիշում աստղագի-
տական գրքերում իր կարդացած ծանոթու-
թյունները:

Ղուրբանը սեղանի վրայից հավաքեց դա-
տարկված շները և զակուսկայի մնացորդնե-
րը: Թեյով լցված բաժակները դրեց աղաների
առջեր և ֆիրուզ բեյին հյատնեց, վոր թեյլ
պատրաստ ե: «Բանաստեղծի» ձայնից աղանե-
րը զարթնելով՝ սկսեցին թեյ խմել. նրանցից
վոչ մեկը ուշադրություն չդարձեց, թե Ղուր-
բանը թեյլ ժամկետից չուտ եր պատրաստել:
կարծես թե ժամանկ վորոշված չլիներ:

Ղուրբանը մի կողմ քաշվեց. ամաններն եր
յեռացրած ջրով լվանում, մաքրում:

16

Հանկարծ ձիերից մեկը խրխնջաց: Բոլորն
ել լուռթյան մեջ ուշադրությունը հավաքած,
սկսեցին լուռ ականջ դնել: Միայն գետակի
խշոցն եր խանդարում ըրջակա լուռթյունը:
Գետակի մեջ չպչպոցի ձայն լավեց:

Ամենից առաջ Զեվադ թեյլ ցած ձայնով
ասաց, վոր գետակից ձիով անցնող կա: Նույն
բոպեյին բոլորն ել վեր կացան և իրենց հրա-
ցանները վերցրին: Ղուրբանն անզեն եր: Բե-
յերը ցանկացան ուղղվել դեպի գետակը:

Ղուրբանը թեյերին դիմելով ասաց.

— Դուք այստեղ մնացեք, յես գնամ,
տեսնեմ՝ ի՞նչ կա. միայն թե զենքի մեկն ինձ
տվեք:

Յերբ Ղուրբանի այս խոսքերը լսեցին,
Զեվադ և Մուրադ թեյլը մոռացան իրենց
վախը և ծիծաղեցին: Հետո՝

— Ե՛, դու յերբեվիցե ձեռքդ զենք վերց-
րե՞լ ես, վոր հիմա ել զենք ես ուզում: Զինի՞
աշխարհը մեղ վրա ծիծաղեցնելու միտք ու-
նես,— ասաց Մուրադ թեյլ և նեղացավ:

Ղուրբանը գլուխը կախեց: Սակայն ֆի-
րուզ բեյն իր հրացանը Ղուրբանին տվեց և
ասաց.

— Վերցրու, յեթե ուզում ես քո քաջու-
թյունը ցույց տալ, ես՝ դու, ես ել՝ հրապա-
րակը:



17

2952-59

Հուրբանը հրացանը վերցրեց:
Ջեվադ բեյն աչքի տակով ֆիրուզ բեյին
նայեց և ասաց.

— Կարծում ես նրա քաջությունը քո գրելիք
բանաստեղծության համար մի նյութ կը ինի:
Ծիծեղեցին: Ել պատասխան տվող չե-
ղավ:

Բոլորն ել չտապ յեկան գետակի յեղերքի
շուրջը բոցավառ լույս արձակող ոջախի
մոտ:

Այստեղ հստակ լսվում եր, վոր գետակից
ձիով անցնում են:

Մուրադ բեյը կամաց ձայնով ընկերնե-
րին ասաց.

— Ես յեղերքից ձիավոր ե անցնում այն
կողմը:

Ֆիրուզ բեյը զարմանքով նայեց իր ըն-
կերներին և ասաց.

— Թերեւս մեր կողմից անցավ, ո՞վ դի-
տի:

Թե ի՞նչպես պատահեց, Հուրբանի աչքն
ընկավ ոջախին:

Ոջախի վրա կերակրի մեծ ամանը չկար:
Անտարակույս տարել եին:

Մուրադ բեյը դառնալով Հուրբանին.

— Տես, ես մարդն ով վոր ե, ցանկացել և
քեզ ձեռ առնել: Կերակրի ամանը տարել ե:
Ջեվադ բեյը ծիծեղելով.

— Հայլանաբար, Հուրբան, այս մարդը
քեզնից շատ գոհ ե մնալու:

Հուրբանն ըստ իր սովորության գլուխը
կախ մտածում եր: Հետո մի կողմ քաշվելով՝
բեյերին դարձավ և ասաց.

— Դուք կամ յետ դարձեք, կամ այստեղ
ել մնացեք: Յես տեսնեմ, թե այն մարդը դա-
դանն ի՞նչպես տարավ: Բեյերը նախ ծիծաղե-
ղանն անցնում է անցնող մարդը ջրից դուրս
գին, բայց Հուրբանի ձայնի և շարժումների
վճռականությունը տեսնելով, վոչ մի բան
չասին և նստեցին: Լոռությունը վերահաստատ
չասին և նստեցին: Լոռությունը վերահաստատ

չասին և նստեցին: Ինչպես յե-

զեց: Այլևս չփչփոց չեր լսվում: Ինչպես յե-

րելում եր՝ գետակն անցնող մարդը ջրից դուրս

գին մտահոգ մի' անի: Կերակուրն ուտելուց

հետո զազանի տակին մի անգամ խփի, վոր-

պեսզի յես ել հանգիստ լինեմ: Սակայն լոռու-

թյունը խանգարող Հուրբանի ձայնի հեռունե-

լու գնացող աղմկի արձագանդից բացի, վոչ

մի պատասխան չստացվեց:

Բեյը նստած նայում եր:

Հուրբանը կես ժամից ավելի անթարթ

աչքերով նայում եր գետակի մյուս ափին:

Կարծես իսկապես պատասխանի յեր սպասում:

Վերջապես ընդհանուր լոռության մեջ ղազանի պղնձի ձայնը զրնդաց։ Պարզ եր, վոր ղազանի տակն եյին ծեծում։

Հենց վոր ղազանի ձայնը լսվեց, Ղուրբանի հրացանը վորոտաց։ Հրացանի արձագանդը չորս կողմը ժխորեց։ Զիերն իրար հետեվից խրխնջացին։ Անտառի քնած թռչունները, դժուհ՝ աղմուկ բարձրացրին։

— Դիպավ, ասաց Ղուրբանը և նորից պատրաստեց։

Շրջակայքն ընկղմվեց լոռության մեջ։ Հեռվում չենքը հաջեցին։

Հրացանի կրակոցից սթափված՝ բեյերն սկսեցին ծիծեղել։

Զեվադ բեյը Ղուրբանին հարցրեց.

— Խիեցի՞ր, հա՞։

— Այո՛։

Մուրադ բեյը Ղուրբանի այս վճռական և համարձակ պատասխանից զարմացած՝

— Ա՛յ, Ղուրբան . . . լոի՛ր, ժողովուրդը վրադ մի ծիծաղեցնի։

Ղուրբանը պատասխան չտվեց։

Բեյերը վերադարձան չինարի տակը։ Ղուրբանը դեռ մի ժամ ել այնտեղ պահակի նման սպասեց։

Այս դեպքերը խանդարեցին բեյերի վորուրդության պլանը։

Այդ գիշերվա վորու վոչ մի հաճույք չպահառեց։

Վաղ արշալույսին բոլորը հեծան իրենց ձիերը և անցան գետակի մյուս ափը։ Այնտեղի տեսարանը բեյերին շատ զարմացրեց։ Գետակի յեղերքին, կոնակի վրա պառկած մի մարդ չտեսա՞ն։ Ղուրբանի ղազանն ել մարդու կողքին չուռ յեկած ընկած։ Ղուրբանի գնդակը նպատակից չեր վրիպել։ Բեյերը կարծես Ղուրբանին առաջին անգամ եյին տեսնում, նրան ուշադրությամբ նայում, այլևս վոչ մի խոսք չեյին ասում։

Այս դեպքից հետո Ղուրբանի վրայից ջընչեցին «խելապակաս» անունը։ Վոչ Մուրադ բեյը և վոչ ել նրա ընկերները այլևս չեյին համարձակվում նրան «խալապակաս» ասել։ Նույնիսկ զդացվում եր, վոր ուզում եյին նրա հետ վորոշ հարդանքով խոսել և նրան հաշդանքով վերաբերվել։

Այս բոլորը Ղուրբան Քիշին Ֆիքանի անգամ պատմել եր Ռյուստեմին, վոր գիտեր իր հոր ցույց տված այս հնարամտության բոլոր մանրամասնությունները, հպարտանում եր նրանով, վոր իր հայրը ժամանակին լավ գընդակակող ե յեղել։

Սակայն չնայած, վոր բեյերի կողմից Ղուրբանին տրված «խելապակաս» անունն այդ դեպքից հետո վերացվել եր, բայց դպրոցական յերեխաները յերբեմն-յերբեմն Ռյուստեմին «խելապակասի տղա» եյին անվանում։

Փոքրիկ թյուստեմը դրանից շատ եր ընկճվում, սրտաբեկ եր լինում։ Ամեն անգամ, յերբ նրան «Խելապակասի տղա» եյին անվանում, նա իր հոր վոչ թե «խելապակաս», այլ հնաբաժիտ, ճարպիկ և քաջ յեղած լինեն ապացու յելու համար, ցանկանում եր իր հորից լսած նույն գեղքը պատմել։ Այդ գեղքը ծանոթ եր վոչ միայն իրենց գյուղին, այլև շրջակա գյուղերին։ Բայց նա անհրաժեշտ չեր համարում էր հորն ու իերն պաշտպանել «խելապակասի տղա» ասող խանութպանների, առեվտրականների, ջրաղացատիրոջ կամ հարյուրապետի տղաների ղեմ։ Թյուստեմը գեռ սկզբից նրանց չեր սիրում և չեր ուզում նրանց հետ խոսել։

Բայց նա ուզում եր հնարավորություն ստեղծել, ցույց տալու համար, թե ինքն ել իր հոր նման ճարպիկ ու քաջ ե։ Ա՛հ, յեթե գետենային թե վորքա՛ն եր նա ցանկանում այդ…

4

Յերբ Թյուստեմի գնացքը «Բերդյուշատ» կայարանը հասավ, գիշերը բավականին առաջացել եր։

Թյուստեմը գլուխը բարձրացրեց և յերկնօին նայեց։ Յերկնօին անհամար ճրագները մառվել եյին։ Այսոր այդ աստղերն ավելի

ուրախ լույս եյին սփռում։ Ահա, բոլորովին հստակ փայլում ե «Նոյի տապանը», վորի մասին հայրը սովորեցրել եր, յերբ դեռ փոքր եր։ Լուսինը ևս իր դեմքի մի մասը բաց արած՝ մարող ճառագայթները գետին եր սըփուում։

Գնացքը հասավ։ Թյուստեմն շտապ ուղղվեց դեպի իրենց գյուղը։

Թյուստեմը յերբ տուն հասավ, հայրը քընել եր։ Մայրը յոթ մոմանոց լամպի թույլ լույսի տակ նստած՝ հավաքած բամբակի բոժոժներն եր մաքրում։

Թյուստեմի գեղեցիկ մայրը նրան ասաց.

— Ապա ինչո՞ւ այսքան ուշացար, յեթե ուզում ես թեյ խմել, սամավարը տաք ե, նայի՞ր։

— Կխմեմ, մա՛յր… ել բամբակ մնա՞ց։

— Վոչ, այս ե մնացել։ Կարծես այս տարի հինգ փութ ել չի լինելու։

— Այդպիսով գործ առաջ չի գնա… այետք ե գործերը բոլորովին փոխենք, յեթե վոչ՝ ամեն տարի այսպես կլինի։

Թյուստեմի և մոր խոսակցության ձայնից հայրն ել զարթնեց և անկողնի միջից առաջ։

— Բամբակ ավելի շատ կլիներ, յեթե Մուրթուզայի տղերքը ջուրը բաց չթողնեյին իրենց այգին, իսկ համզացիները՝ իրենց ցորենի արտերն ու բանջարանոցները։ Մեր ջուրենի

Ո՛ւ նրանք կտրեցին։ Բամբակին ել առանց ջրէ
մնաց։

— Ճիշտ ե ասված, թէ մարդ ինքը ջրին
պէտք ե պահապան լինի։

Հայրն անհուսորեն պատասխանեց.

— Այդ խոսքը լավ խոսք ե, բայց ո՞վ ե
տաիկ անում։ Հավ խոսք շատ կա, ո՞վ ե գոր-
ծադրողը, որհնածի՛ տղա։

— Դրա համար ել անհրաժեշտ ե, վոր
ամենքն ել իրենց գլխին չմնան, միանան և
միասին աշխատեն, իրենց տնտեսությունները
միասին կարգի բերեն։ Յեթե գիտենաս, թէ
այս մասին այսոր մեզ ի՞նչ լավ զեկուցում
ովին, ի՞նչ լավ խոսքեր ասվեցին։ Հայրիկ,
յեթե դու դրանք անդամ լսելիք, կասելիք, թէ
ի՞նչ խելացի մարդիկ կան, ի՞նչ լավ ճանա-
պարհներ են ցույց տայիս։

Պյուստեմի այս խոսքերին հայրը պա-
տասխան չտվեց։ Մայրն ել ամուսնուն ու
ողային նայելով՝ խոսք չասաց։ Այդ տեսնելով՝
Պյուստեմն ել չչարունակեց։ Նա այսոր հոգ-
նած եր։ Մտադիր եր առավոտը վեր կենալ
և գործադրել այսորվա զեկուցողի առաջար-
կած տնտեսության ձևերը։ Այս նրա պարտա-
կանությունն եր։ Սակայն այս մասին անհրա-
ժեշտ եր բազմակողմանիորեն մտածել։ Այս
մտադրություններով ել Պյուստեմն անկողին
մտավ։

Պյուստեմն անմիջապես չկարողացավ քը-

նել։ Նա մտածում եր իրենց գյուղում կոլեկ-
տիվ տնտեսություն հաստատելու մասին, և
մտածելիս աշխատում եր յերեակայության
մեջ պատկերացնել գյուղատնտեսության առա-
ջիկա տեսարանը։

Իրար անվերջ հաջորդող մի շարք խառնի-
խուռն մտքերից հետո, Պյուստեմը կարողացել
էր համոզվել, վոր այդ նոր գործը պիտի կա-
րողանար կյանքում իրագործել կուսկազմա-
կերպչի հետ խորհրդակցելուց հետո, չքավոր
գյուղացիների կոմիտեյի հետ միասին, եր
նման գյուղացիներին ևս ներգրավելու այդ
գործի մեջ։

Պյուստեմը ցավելով մտածեց. — «ափսոս,
վոր մեր գյուղում բջիջ չկա, բջիջի ղեկավա-
րությունն այս գործում վորքա՛ն կարեոր կլի-
ներ. . .

Մի բոպե հետո նա ինքն իրեն սիրո տա-
լով մտածում եր. — «մնաս չունի, ինքն ու
կուսկազմակերպիչը միասին կաշխատեն զե-
կուցողի ասածի նման, կուլեկտիվ տնտեսու-
թյան հիմք կդնեն։ Խնդիրը կպարզի բոլոր
չքավոր գյուղացիներին։ Այդ գյուղացիները
չուտ կհասկանան։ Նրանց մեջ ճարպիկ, աշ-
խատասեր մարդիկ քիչ չեն»։

Այս մասին մտածելիս նրա աչքի առաջ
կանգնած ելին՝ Որուջ Քիշին, Ֆերհադը, ի-
սան, Ալի-Փաշան, Զամանը, Յարդմ ողլին և
ուրիշները։ Ճիշտ ե՝ սրանց տնտեսություն-

ներն ել Պյուստեմի հոր տնտեսության նման գրեթե գոյություն չունենալու աստիճան աղքատ և փոքր եյին, ու շատերն անառաւն չունեյին: Իսկ նրանք, վոր անառաւն ունեյին, այնքան ել բավարար լինելու չափ ուժեղ անառաւններ չունեյին, բայց բոլորն ել մեկը մյուսից ճարպիկ, աշխատասեր մարդիկ եյին, ամեն գործի լծվում և տնտեսությունն առաջ եյին տանում, առաջվա նման ուրիշի մոտ բատրակություն չեցին անում:

Սակայն յեթե նրանց տրամադրության տակ լինյեին գյուղատնտեսական գործիքներ, տրակտորներ և ուրիշ մեքենաներ, վորոնց նկարներն ինքը տեսավ զեկուցման ժամանակ, ինչպես նաև յեզներ և գոմեչներ, այսորվա բամբակի բերքը վո'րքան ավելի կլինել: Իրենք ել վորքան կմեծացնեյին իրենց տնտեսությունը:

Վերջապես քունն իր քնքուշ գիրկն առավ այդ մտածունքներից հոգնած Պյուստեմին և նրանց ցույց տվեց կոլտնտեսական Հիմքերի վրա կառուցված նոր Սաֆալու գյուղի վաղվա տեսարանը, վոր չեր նմանում այսորվա վիճակին:

Գյուղի տները ցրված եյին իրարից հեռու, ընդարձակ տարածության վրա՝ դեպքի վայրն շտապողները շուտ հասնելու համար ցատկում եյին ցանկապատերից, թռչում եյին առուներից:

Մեկ-մեկի հանդիպող գյուղացիներն իրար հարցնում եյին.

— Ի՞նչ ե պատահել:

— Նորից ի՞նչ դժբախտություն ծայր տը-վեց:

— Այս աղմուկն ո՞ւմ տնից ե լավում:

Գիշ հետո պարզվեց, վոր ճայնը յեկել եր գաղեր քիչու բակից: Այնտեղ մի քանի կին, բոլորը միասին, աղմկում եյին, մի քանիսը հայհոյում, վոմանք ել լաց լինելով՝ անհականալի խոսքեր եյին արտասանում:

Ողնության հասած տղամարդիկ մի կողմ կանգնած՝ տեղի ունեցած դեպքի մասին խոր-էրդակցում եյին: Վոմանք նոր յեկածներին նորից պատմում եյին ամբողջ իրողությունը,

վոքանք ել հավաքված գյուղացիներին հայտնում եյին իրենց առաջարկները։ Բոլորն ել խոսում եյին։ Ծները մոմուալով վերապառնում եյին և, ասես թե մի բան վերհիշեյին, նորից տեղերից վեր ցատկում, հաջելով գնում եյին դեպի իրենց յեկած տեղը։ Ի՞նչ եր պատահել։ Ի՞նչ եր այս ձայնն ու աղմուկը, վոր քնած գյուղը զարթեցրել եր։

Սաֆալու գյուղի հարեան Դրնավլու դրաւդից յեկած մի քանի զինված ձիավոր ըրջապատել եյին Գաղիր քիչու ընակարանը և թուր՝ Գյուլիզարին փախցրել եյին։ Այո՛, փախցրել եյին այն Գյուլիզարին, վոր կոռակերատիվում եր ծառայում, և վորին առավոտյան Պյուտեմնի իր մատիտը տվել եր, և վորը յերեկոյան ել, զեկուցումից հետո, Պյուտեմնի յերեակայությունից չեր հեռանում։ Մի մեռք, վոր Ադրբեջանի գյուղի համար հանրվում եր սովորական։ Հին ժամանակների ոյլ անիծյալ սովորությունը դեռ ապրում եր։

6

Գյուլիզարը 17-18 տարեկան աղջիկ եր։ Հինգ տարեկան եր, յերբ կորցրեց իր թոքախտավոր հորը և նրանից հետո իր մոր հնա մնացել, և Գաղիրի խնամքի տակ։

28

Խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո նա սկսել եր սովորել իրենց գյուղում բացված դպրոցում։ Գյուլիզարը հնգամյա դպրոցն ավարտելուց հետո թեև ցանկացել եր իր ուսումը շարունակել, սակայն հնարավոր չեր յեղել շրջանի դպրոցը կամ բագու դնալ և իր փափառին համնել։

Նա կարդում եր թերթերում և մանավանդ «Արեւելքի կինը» ժուրնալում դրված հոդվածները՝ խորհրդային իշխանության որոք կնոջը, տղամարդկանց հավասար՝ ամեն կուլտուրական, հասարակական և տնտեսական աշխատանքների ներդրավելու մասին և, հակառակ իր հոր՝ Գաղիր քիչու ընդդիմության, սկսել եր ծառայել գյուղի կոռակերատիվում։

Գյուլիզարը հաճելի քնավորություն ուներ. սիրում եր աշխատանքը և կոպերատիվ գործը։ Նա կարճ ժամանակամիջոցում կարողացել եր բողոք գյուղացիների համակրանքը վայելել։

Գյուլիզարի գործը միայն կոռակերութիվի աշխատանքով չեր սահմանափակվում։ Նա միաժամանակ մասնակցում եր գյուղի աշխատանքներին, մասնավորապես կանանց անդրագիտությունը վերացնելու գործում ինքն իրեն հարվածային եր հայտարարել։ Գյուլիզարի արտքինն ել հաճելի և անթերի յեր։ Բարձրահասակ, ցորենագույն գեմքը մասամբ ծածկող ոև մաղերը, թափանցող աչքերը, կարմիր

29

շրթերը նրան գեղեցկացնում և դեղեցկություն
նից հաճույք զգացողների ուշադրությունն եցին
դրավոմ:

Իսկ Գյուլիզարն անտարբեր եր: Կոռպե-
րատիվի վարիչ Մուրադը բերի յեղբոր վոր-
դին՝ Յուսուֆն իզուր Գյուլիզարի մոտ եր ու-
ղարկում իր վորսի ընկեր՝ Դրնագլը գյուղացի
Հյումմեթ Ալուն և զանազան արտահայտու-
թյուններով աշխատում իմացնել, թե ինքը
Գյուլիզարի վրա սիրահարված ե: Գյուլիզարը
ձանաչում եր առեվտրական Քերբելա Սալմա-
նի տղային՝ Հյումմեթ Ալուն, վոր շուտ-շուտ
դալիս եր կոպերատիվ, նրան շեշտակի նա-
յում, անտեղի ժպտում եր: Այս բոլորը միայն
Գյուլիզարի մեջ զզվանք եյին առաջացրել:
Այս պատճառով ել ընկերոջ «գործը սարքե-
լու» համար միջնորդություն անող կոպերա-
տիվի վարիչին Գյուլիզարը վճռականորեն
խնդրել եր այդ մասին այլևս չխոսել:

Հետագայում կոռպերատիվի վարիչը թե՛ն
նորից ցանկացել և փորձ եր արել այս մասին.
Գյուղիզարի Հետ խոսք բաց անել, բայց աղջկա
կրկին ու կրկին տված լուրջ պատասխանից
սուիպված եր յեղել այդ խնդիրն ամբողջովին
թողնել:

Այդպես ել, յերբ Գյուլիզարն արդեն հար-
ցը փակված եր համարում, մարդիկ պատրաս-
տություն եյին տեսել և վորոշել աղջկան
փախցնել:

— Յեթև հոժարակամ չի համաձայնում,
այսպէս այսպէս որենքով ճամբի կդա:

Այս վորոշումն իրակնացնելու համար այդ
յերեկոյան Դրագլու գյուղում պլան եյին մը-
շակել, չյումեթալու զինված ճիշավորները
կես գիշերին հարձակվել եյին Գաղեր քեշու
խրճիթի վրա:

Սակայն Գյուլիզարը նրանցից չեր։ Նա
ինքն իրեն չեր կորցրել և Հյումմեթ Ալու տու-
նը տարվելուց հետո, անմիջապես, իրեն շր-
ջապատող կանանց առաջարկներին պատաս-
խանել եր։

«Յես այդ վայրենի մարդուց զգվում եմ:
թող հոգիս առնի, ինձ սպանի, բայց իմ գլխիս
այս խաղը խաղացող մարդուն յես կին չեմ.
դառնա: Դուք ել այլևս վոտ ու ձեռ մի՞՛ք
բնկնի»:

Հյումմեթ Ալու մարդիկ իզուր տվաս-
տում ելին նրան հանգստացնել։ Գյուլիզաբն
անգամ չեր ուզում լսել։ Հյումմեթ Ալու բա-
րեկամներն ու հարեւանները, յերիտասարդ-
կանայք, իզուր տեղը Գյուլիզաբին համոզե-
շու համար զանազան նվերներ ելին տալիս և
խոստումներ անում։

Գյուղիզարը ծիծաղում եր նրանց արած
ճիպերի վրա և կանանց ել ամաչեցնում, ապա-
ցուցելով, վոր այս վայրենի որենքը կանանց
իրավունքների դեմ տղիտության հարձա-
կումն է:

Առավոտը վաղուց եր բացվել: Բայց դեռ
Ռյուստեմը չեր զարթել: Մայրը, նկատի առ-
նելով, վոր Ռյուստեմը հոգնած եր յեկել և
գիշերն ել անց եր կացրել այս ու այն կողմ
շուր դալով, չեր կարողացել քնել, չուզեց նը-
րան զարթեցնել:

Վերջապես Ռյուստեմը վեր կացավ:
Յերբ մորից իմացավ գիշերվա պատահածնե-
րը, ափսոսաց, վոր քնել եր ու չեր զարթել:

— ՊԵտք է ինձ զարթեցնելիք: Յեզր գյու-
ղում այլպիսի դեպք է պատահում, կարելի՞
յե քնել:

— ՄԵնք այնքան հեռու յենք, վոր յես
ել ձայն չեմ լսել: Հայրդ զգոն քնող ե, նա
լսել և վեր եր կացել: Այս լուրն ել առավոտը
նա տվեց:

Ռյուստեմը նորից շարունակեց դժգոհել:

Ամեն պարագայի անհրաժեշտ եր անհա-
պաղ միջոցներ ձեռք առնել: Շուտ տնից դուրս
յեկավ, գտավ կուսկազմակերպչին (կուս-
քիջը Սաֆալվում չեր, այլ Նարիման գյու-
ղում) և նրան ասաց յերեկվա զեկուցման
բովանդակությունը:

— Անհրաժեշտ ե մեր գյուղի չքավորնե-
րին հավաքել և կոլտնտեսություն կազմելու
մասին նրանց բացատրել:

— Ի՞նչ ես առաջարկելու:

— Մեր գյուղում կառուցել կոլխոզի ա-
ռաջին շենքը:

Կուսկազմակերպիչը հավանեց Ռյուստեմի
մտքին: Թեև նրան համաձայն եր, սակայն ան-
հրաժեշտ համարեց խնդիրը խորհրդակցու-
թյան դնել նաև թիջի բյուրոյում:

— Յե՞րբ ե տեղի ունենալու կուսրջիջէ
բյուրոյի նիստը:

— Յերկու որից:

Խնդիրը յերկու որ հետաձգելը Ռյուս-
տեմին դուր չեկավ: Բայց ակամա պետք ե հա-
մակերպչեր: Ռյուստեմը վորոշեց յերկու որ
հետո Նարիման գյուղը թիջի բյուրոյէ
նիստին գնալ:

— Լավ ե. քո առաջարկը բյուրոյում
կդնես, վորոշում կընդունեն:

Այսպիսով առաջին խնդիրը լուծված եր:
Հիմա Ռյուստեմին հանդիսու չեր տալիս Գյու-
լիզարի առեանգումը:

Կուսկազմակերպիչը հայտնեց, վոր այդ
մասին թիջի քարտուղարին տեղակացրել եր:
Ռյուստեմը դրա վրա մի քիչ հանդստացավ:
Կուսրջիջի քարտուղարին ճախաչում եր:
Ռյուստեմին հայտնի յեր, վոր քարտուղարը
յեթե կացությանն իրազեկ լինի, այսոր իսկ
գյուղ կգտ:

Ռյուստեմը բաժանվեց կուսկազմակերպ-
չից և նորից սկսեց գյուղի մեջ ման գալ:
Այսոր գյուղացիների մեծ մասը աշխա-

տանքի դուրս չեր յեկել։ Յերեկվա գեպքը թե՛ն
գյուղացիների մեծ մասի հուզմունքի պատա-
ճառ եր դարձել, սակայն գյուղացիները շրվա-
րել եյին, չեյին իմանում, թե ի՞նչ են անելու։

Իյուստեմը մտադիր եր գոհացնել նրանց,
վոր մտածում եյին Գաղիր Քիչուն ոգնու-
թյան համել և աղատել Գյուլիզարին։ Իյուս-
տեմն անհրաժեշտ եր համարում գործի մեջ
նետվել և աղջկա հետեւից գնալ։

Սակայն Իյուստեմին բավական նեղում
եր այն հանգամանքը, վոր գործ տեսնելու
համար անհրաժեշտ եր սրանրա հետ հա-
մաձայնեցնել։ Նա շտապում եր Գյուլիզարին
ձեռք բերել և կորտնտեսության հիմքը դնել։
Սակայն նրան տանջում եր այն, վոր իրեն ըըր-
ջապատողները բավականանում եյին միայն
զուր խոսքերով։ Ամեն պարագայի նրան
հույս եր ներշնչում իր կողմնակիցներ ունե-
նալու հանգամանքը։

Կեսորվան քիչ եր մնացել։ Արեի ջերմ ճա-
ռագայթներն այսոր Սաֆալու գյուղն ավելի
քնքորեն եյին տաքացնում։ մինչդեռ գյուղի
ներքելի հողերում բուսած բամբակի բոժոժ-
ներն արեի սուր ճառագայթների տակ ճեղքվել
և ցույցեյին տալիս իրենց պահած բամբակը,
կանաչ թփերն սպիտակ ծաղկիներով եյին
զարդարվում։

Իյուստեմը յերբ սպիտակող բամբակները
դիտելով ու մտածկոտ անցնում եր, կուսկագ-

մակերպչի կողմից ուղարկված մի տղա լուր
տվեց, թե կուսքիջիջի քարտուղարը յեկել, իրեն
կանչում ե։

Իյուստեմն արագ քայլերով վերադար-
ձավ և կուսքիջիջի քարտուղարին գտավ կոո-
պերատիվի առաջ։

Կուսքիջիջի քարտուղարը Բագլի բանվոր-
ներից եր, դեռ Մուսավաթի որերից սկսել
եր աշխատել հեղափոխական գործում։ Նա
այն կուսակցականներից եր, վորոնք ուղարկ-
ված եյին գյուղական բջիջներն ամրապնդելու
համար։ Ասում եյին, թե նա բանվորությու-
նից առաջ եր քաշվել և յեղել եր պատասխա-
նատու աշխատանքներում, հետո իր ցանկու-
թյամբ աշխատանքի յեր ուղարկվել կուս-
սուրին կազմակերպությունները։

Իյուստեմը նրան շատ եր սիրում և մտիքե-
րին հավանում։ Գյուղի բջիջին ցույց տված
դեկավարությունը, նրա առավել ուշադրու-
թյունը գյուղի կուսակցականների քաղաքա-
կան դաստիարակության գործին, անցյալում
կուսակցականների մեջ նկատված տեղայնու-
թյան և խմբակայնության հին որերի դաս-
տիարակության մնացորդները մեջ տեղից վե-
րացնելու աշխատանքները բոլոր կուսակցա-
կանների համակրանքին եյին արժանացել։

Մինչդեռ նրան նախորդող քարտուղարը
կոչ միայն չեր աշխատել այդ արատավոր
կողմերը վերացնելու, այլև թերևս նրանց հե-
ղինակն եր յեղել։

Կուսրջիջի քարտուղարը Ռյուստեմին
Մելուց հետո, հավանություն տվեց կոլեկտիվ
տնտեսություն կազմելու նրա մտքին և ասաց.

— Այս մասին կուսկազմակերպությունը
ձեզ ամեն կերպ կողնի: Ընկ. Լենինը մեզ կտա-
կել է, վոր գյուղում սոցիալիզմը կարող է ա-
ռաջ գնալ միայն հավաքական տնտեսությա-
կոլտնտեսությունների ճանապարհով:

— Յես ուզում եմ ժողով հրավիրել, չքա-
վոր գյուղացիներին հավաքել և նրանց հետ
խոսել: Բոլորն ել կհամաձայնեն միասին
տնտեսության դործերն առաջ տանելու:

— Շատ լավ, հրավիրեցեք. միայն, ըն-
կեր Ռյուստեմ, յերբեք չմոռանաք, վոր գա-
սակարդային թշնամին պիտի աշխատի այդ
դործին արգելքներ հարուցել:

— Մենք նրանց լավ ենք ճանաչում: Յեր-
բեք թույլ չենք տա, վոր նրանք մեր մեջ գան:
Ռյուստեմը հետո խոսք բաց արեց Գյուլիզա-
րի առևանդման մասին:

— Ի՞նչ եք ուզում անել:

— Անհրաժեշտ ե գնալ հետ բերել:

— Վախենում եմ կոիվ տեղի ունենա:

Ռյուստեմը ծիծաղելով ասաց.

— Յես նրանց ճանաչում եմ: Վոչինչ ել
չի լինի: Նրանք ապիկար մարդիկ են:

Կուսրջիջի քարտուղարը վոչ մի խոսք չա-
ռաց: Կուսկազմակերպչի և գյուղի ներկայա-
ցուցչի հետ խոսեց ու գնաց:

Ռյուստեմը լծվեց չքավոր գյուղացիների
ժողով հրավիրելու աշխատանքներին: Գյուղի
ներկայացուցչին հայտնեց, թե այս ժողովը
հրավիրել անհրաժեշտ է:

Գյուղի ներկայացուցիչն ուզեց ժողով
հրավիրելուց հրաժարվել և ասաց.

— Գյուղիզարին փախցնելու մասին Գործ-
կոմին հայտնել եմ:

Ռյուստեմը կրկնեց.

— Բացի գրանից, ուրիշ խնդիր ել կա:
Ցանքերը և տնտեսությունները միացնելու մա-
սին ըթանի կենտրոնում տեղի ունեցած յե-
րեկվա խորհրդակցության մասին անհրաժեշտ
ե տեղեկություն տալ: Ապա յես ի՞նչու ելի
գնացել:

8

Մի քանի ժամ հետո ջրղացի բակում
գյուղի չքավորներից յերեսուն հոգուց ավելի
մարդ եր հավաքվել: Նրանք ծառերի կոճղե-
րին, փլած պատի և կոտրած ջաղացքարի վրա
նստած՝ խոսում եյին գիշերվա գեղփի մասին,
սպասում, վոր ժողովը բացվի:

Վերջապես գյուղի ներկայացուցիչը յեկավ
և ժողովը բաց արավ: Յերբ նա առաջարկեց
ժողովի նախագահ ընտրել, ըոլորը միասին՝

— Ռյուստեմը, Ռյուստեմը, ասելով
թեկնածու առաջարկեցին, գիտենալով հան-
դերձ, վոր նա այդ ժողովում զեկուցելու յեր:

Յերբ խոսքը Ռյուստեմին տրվեց, նա ա-
մենից առաջ գիշերվա դեպքի մասին խոսեց.

— Ընկերներ, ամենից առաջ ուզում եմ
խոսել այն մասին, վոր այսոր մեր դյուլում
մի մեծ դժբախտ դեպք է տեղի ունեցել, չե-
գեպք, վոր ասում ե, թե՝ կարծես մեր դյու-
լում յերբեք հեղափոխություն չի կատարվել:
Ուրիշի արյունը տղրուկի նման ծծողները նո-
րից գլուխ են բարձրացրել և ահա խեղճ Գա-
դիր քիչու տունը կոխելով՝ Գյուլիզարին
վախցրել են:

Այստեղ Ռյուստեմի ձայնը դողաց: Ռյուս-
տեմը մի քիչ կանգ առավ: Գյուղացիներն
իրենց գլուխները կախած՝ ուշադրությամբ
մտիկ եյին անում:

Ռյուստեմը նորից շարունակեց.

— Տեսնում եմ՝ ներքեւ եք նայում, տես-
նում եմ, վոր ամենից առաջ մեղավորը մենք

— Ընկերներ, յեթե մենք միացած լինե-
լինք, յեթե ամենքն ել իրենց գլխին առանձին
չապրեյին, վոչ Հյումմեթ Ալին և վոչ ել նրա
պապը, վոչ Մուրադ բեյի յեղոր վորդին,
վոչ մեկը, վոչ մյուսը մեզ հետ չեյին կարողա-
նա գլուխ ելի, իրենց վախից չեյին կարողա-
նա տնից անգամ դուրս գալ: Այսպէս չե՞:

Չնայած վոր Ռյուստեմը շրջանի կենտրո-
նում ժողովների ճառախոսների և դյուլ յե-

կած զեկուցողների ձեւը կեղծում եր, բայց
դյուլացին նրա պարզ խոսքերը լավ եր հաս-
կանում և ըստ այնմ ել ուշադրությամբ լսում:
կանում կանում է հարցըրեց՝ «այսպես չե՞»,
ապա այսպես չե՞», մի քանի տեղից պատաս-
խանեցին.

— Այդպես ե:

— Ճի՞շտ ե, ճի՞շտ ես ասում:

Ռյուստեմը խոսքը շարունակեց և վերջում
ել այսպիսի առաջարկ արեց.

— Ընկերներ, յես առաջարկում եմ, վոր
անմիջապես ժողովը վերջանա, ճի նստենք,
գնանք Դրնագլու և Գյուլիզարին յետ բերենք:
Գյուղի լիազորն ել այժմ թող մարդ ուղարկի:
Դրնագլի լիազորին, նրան կանչի, վոր սա ել
մեզ հետ գա: Ինչպե՞ս, համաձա՞յն եք:

— Համաձա՞յն ենք... լավ խոսք ե...

— Թերեւ աղջիկը համաձայնություն-
ովել ե, — ասաց մեկը տեղից:

Մի ուրիշը տեղից վեր կացավ և պատաս-
խանեց:

— Վո՞չ, նա չի համաձայնում, վոչ: Մենք
այդ աղջկան ճանաչում ենք, քաջ աղջիկ եր:

Այդ ասողը Գաղիր քիչու ամենից մոտիկ
չարեան Որուջ քիչին եր:

Գյուղի մեջ Որուջ քիչին ճանաչվում եր
վորպէս անձնվեր, հավատարիմ մարդ, վորին
միշտ հարգում եյին: Նրա պատասխանը շե-
լուց հետո գյուղացիներն ասացին:

— Որուջ քիշին ճիշտ ե ասում, աղջիկը չե
համաձայնում:

— Ո՞վ գիտի, թերեւս համաձայնի:

Դյուղացիները նորից աղաղակեցին:

— Վոչ, վո՛չ, չի համաձայնի:

Բյուստեմը հանգստացրեց աղաղակող
դյուղացիներին:

— Հանգստացեք, ընկերնե՛ր: Մենք
կդնանք, կտեսնենք, յեթե համաձայնություն
տվել ե՝ թող մնա, ասելիք չունենք, իսկ յեթե
չի համաձայնել, յետ կրերենք: Ի՞նչպես, հա-
մաձա՞յն եք:

— Այդ լավ խոսք ե: Ճի՛շտ ե...
ճի՛շտ... բանաձև ընդունեցեք...

Յերբ նախազահը Բյուստեմի առաջարկը
քվեյի դրեց, կոշտացած և պնդակազմ ձեռքե-
րը վեր բարձրացան:

— Ընդունվեց:

Յերկրորդ հարցը դյուղատնտեսության
միատեղ, հավաքական հիմքերի վրա վերակա-
ռուցման խնդիրն եր, վոր յերեկվանից զրա-
ղեցնում եր Բյուստեմի միտքը: Բյուստեմն
ակսեց այս մատին խոսել:

— Ընկերնե՛ր, դուք գիտեք, վոր յերեկ
յես ուղարկվել եյի շրջանի կենտրոնը. ինչ-
պես գիտեք՝ այստեղ ակտիվի ժողով կար:
Պետք ե այդ մասին ճեղ զեկուցեմ: Այ ընկեր-
ներ, այնտեղ մեր տնտեսությունը բարձրաց-
նելու ճանապարհը մեզ ցույց տվին: Ինչպես

վոր մենք տեսնում ենք, մեր տնտեսությունն
առաջ չի գնում: Որինակ՝ մենք բամբակ ենք
ցանում: Մեկ հեկտար բամբակն առնվազը 40
փութ բերք ե տալու: Բայց ո՞ւր ե: Մենք մի
հեկտար եյինք ցանել, բայց մեր բամբակը 30
փութ ել չի լինի:

Արծարծված խնդիրը դյուղացիներին հե-
տաքրքրող հարց եր: Ճառախոսի խոսքն ընդ-
հատեցին:

— Այո՛, չի լինի:

— Այ մարդ, դու 30 փութ ես ասում, 25
ել չի լինի:

— Այս տարի բամբակը բոժոժ չտվեց:

Դյուղացիներն իրար հետեւից աշխատում
եյին իրենց մտքերն արտահայտել:

Որուջ Քիշին տեղիցը վեր կացավ և յե-
րեսը դեպի հասարակությունը դարձնելով.

— Այ ընկերներ, թողեք մի տեսնենք, են
մարդն ի՞նչ ե ասում:

— Ճի՛շտ ե, թույլ տվեք՝ տեսնենք, լուս-
թյուն:

Նախագահը ժողովականներին լուցնելու
համար վեր կացավ, դիմացի սեղանին խփեց:
Յերբ դյուղացիները զեկուցին, Բյուստեմը շա-
րունակեց.

— Այ ընկերներ, հանգստացե՛ք, յես իմ
խոսքս ասեմ: Ինչպես յերեկ մեղ հասկացնում
եյին, յեթե շարունակենք անհատորեն աշխա-
տել, միշտ ել այսպիս պիտի լինի, վոչ մի բան

դուրս չի գա: Ինքն իր գլխին վոչ վոք, վոչ
տրակտոր կկարողանա առնել, վոչ ել ութիշ-
մեքենաներ ձեռք կրերի, վոչ յեզ, վոչ ել բամ-
բակը կավելացնի: Ինչպես տեսնում ենք, մեռ-
նակ գործ առաջ չի դնա:

— Ճի՞շտ ե ասում:

— Վորովհետև գյուղացին աղքատ ե:

— Պետք ե կառավարությունը չքավորին
ոգնի, յեթե վոչ՝ չքավորին փողը վորտեղի՞ց
ե, վոր մեքենա առնի:

— Նա ել այդ ե ասում: Յեթե ոգնություն
չինի, բան դուրս չի գա, ասաց նախագահը և
նորից սեղանին խփեց: Գյուղացիները լոեցին:
Ռյուստեմը լսելով գյուղացիների այդ արտա-
հայտությունները, շարունակեց:

— Այ ընկերներ, ասում եք վոր պետք ե
կառավարությունը ոգնի գյուղացիներին: Յես
ել եմ ասում, բայց մի՞թե կարելի յե յուրա-
քանչյուր գյուղացուն առանձին-առանձին
տրակտոր տալ: Մինչև այժմ՝ մեզ փող տվին,
սերմացու տվին: Բայց նորից մնացել ենք
նույն վիճակում: Յեթե Սաֆալու գյուղում
վերցնենք չքավորների թիվը, 10 տնտեսու-
թյուն կլինի:

— Հազիվ լինի:

— Սրանք առանձին-առանձին տնտեսու-
թյուններ ունեն: Դուք լավ դիտեք, թե այդ
տնտեսություններն ի՞նչ վիճակում են գտնը-
վում: Անհրաժեշտ ե, վոր գյուղացիները միա-

նան և իրենց տնտեսությունները միատեղ, ըն-
կերովի առաջ տանեն, միատեղ աշխատեն,
ըերքը միասին ստանան և ստացած ըերքից
յուրաքանչյուրն իր բաժինն ստանա: Կառա-
վարությունն այս գործին ել կոժանդակի, փող
ել բաց կթողնի, մեքենա ել կտա, վերանո-
րոգման համար բաց կթողնի անհրաժեշտ յե-
ղածը:

Յեթե մենք աշխատենք մեզ բարեկեցիկ
դարձնել, մեր կենցաղը բարելավելու գործը
մեր ձեռքին ե:

Այն գյուղացին, վոր քիչ առաջ ասում եր,
թե Գյուլիզարը թերեւս համաձայնություն ե
տվել, նորից ասաց.

— Յերբ միատեղ լինի, աշխատողը պիտի
աշխատի, իսկ ծույլերն ել պատրաստից պիտի
ուտեն ու պառկեն:

— Ռյուստեմ, սրան մտիկ արա: Տե՛ս,
այս մարդու ասածն ել ե ճիշտ:

Այս կետը Ռյուստեմին ել զբաղեցնում եր:
Նա գյուղացիներին հանդստացրեց ու ասաց.

— Իմ կարծիքով այս բանը գործի գըր-
վածքից կախում ունի: Ով ընկերության մեջ
չի աշխատում, նրան վոչինչ չի տրվում և ըն-
կերությունից գուրս կհանվի: Այդպիսիներին
չենք պահի: Նա ինքը գիտի: Հավաքական
տնտեսության համաձայնողը, ինչ գործ վոր
իրեն հանձնարարվում ե, պետք ե կատարի:
Յեթե շատ աշխատի, շատ ել կտանա: Յեթե
քիչ աշխատի-քիչ բարիք կտանա:

— Կա՛վ ե ասում:

— Ա՛յ ընկերներ, մենք այստեղ նստած դյուլացիներս այս տարի քանի՞ հեկտար բամբակ ցանեցինք: 35 հեկտար կլինի՞:

— Կլինի, ավելի չի լինի:

— Թերես 30 հեկտար:

— Այս 30 հեկտարից հազիվ 80 փութքերք ե ստացվել: Բայց յեթե ջուրը մեր ձեռքում լիներ, հողը յեթե լավ մշակելինք, ժամանակին արաթ անելինք, քաշող անասուն ունենայինք, յեթե տրակտորը մեր հողերը վարեր, մեր բամբակը... Այստեղ Պյուստեմը կանգ առավ և, գլխում թվեր պրատելով՝ ասաց.

— 30 հեկտարից առնվազն 1200-1300, փութք, թերես ավելի բամբակ պիտի ստանայինք:

— Պյուստեմ, յեթե ջուր լինի՝ կլինի:

— Զուրն ել պետք ե ժամանակին լինի: Այն ժամանակ բամբակի բոժոժը անհաշիվ կլինի:

Որուջ քիշին կտրելով Պյուստեմի խոսքը.

— Դու ինքդ գիտես, վոր այս տարի յեռ ել, Եմին փաշան ել արաթ չկարողացանք անել, յերկուս ել բանջարեղեն ցանեցինք:

Որուջ քիշու կողքին նստած դյուլացի աղջիկը նրա խոսքերը հաստատեց:

— Ճի՛շտ ե, մարդը ճիշտ ե ասում:

Որուջ Քիշին ինքն ել իր խոսքերը հաստա-

տեց: «Այո, այո՛» ասաց ու մի անգամ ևս իր մեծ գլխարկի տակ ավելի փոքր յերեվացող գլուխը ծուեց: Ուզեց մի քանի խոսք ել ասի, բայց չխոսեց: Պյուստեմի ձայնն աղմկում եր:

— Դուք գիտեք, թե ի՞նչպես Որուջ քիշին և ուրիշներն այս տարի առանց արաթի մնացին, վորովհետև մեր ջուրը մեր ձեռքը չե: Յերբ ջուրը մեր գյուղն ե գալիս, մեկ ել տեսնես անորենի տղերքը ջրի առաջը կտրում, կապում են չալթուկի: Համգացիներն այս տարի ջուրը դողացան և հայահատիկի: Վրա կտրեցին: Յես ել ականատես եմ, այդ գուք ել զիտեք: Բայց յեթե մենք միանանք, այդպես չի լինի, ջրի տերը մենք կլինենք, մի կողմից հողը կլարենք, մեկ կողմից արաթ կանենք: Նույնիսկ յեթե ուզենք՝ ջուրը վերեվի հողերն ել կարող ենք տանել: Յեթե բանկից փող վերց նենք և այս ջրաղացի կողքին մի մոտոր դնենք, վերեկի հողերն ել կծրվեն: Քանի անգամ այս բանը մեզ առաջարկել են:

Պյուստեմը վորքան վոգեվորված խոսում եր, գյուղցիներն այնքան իրենց ուշադրությունը լարում եին: Պյուստեմի խոսքերը նրանց աչքի առաջ կենդանացնում եյին անհաշիվ բամբակի ցանքերի տեսարանը:

Պյուստեմը վերջացնով իր խոսքը.
— Այժմ ի՞նչ եք ասում. համաձա՞յն եք, վոր միանանք: Մեր տնտեսությունները միասին կտրավարենք:

— Համաձայն ենք:

— Ո՞վ համաձայն չե:

Որուջ քիշին ձեռք բարձրացրեց և Պյուստեմին դառնալով.

— Դու հարցըու, ո՞վ համաձայն ե, նրա անունը գրի:

— Ճի՛տ ե, ճի՛տ ե:

Պյուստեմն Որուջ քիշը առաջարկի համաձայն գրեց նրանց անունը, վորոնք ցանկանում եյին իրենց տնտեսությունները միացնել: Գրփողներից առաջինն Որուջ քիշին եր, իսկ յերկրորդը՝ Գաղիր քիշին:

Այդ անելուց հետո առաջ յեկավ այս նոր կազմակերպությունը կարգավորելու, կանոնադրությունը պատրաստելու համար մի մարմին ստեղծելու խնդիրը:

Պյուղացիները միաձայն առաջարկեցին Պյուստեմին և ծափահարեցին, հետո առաջարկված մի քանի թեկնածուներից ընտրեցին նաև յերկու անձ՝ Թերհաղին և Զամանին:

Այսպիսով դրվեց Սաֆալու գյուղի կողմանտեսության հիմքը և 3 հոգուց բաղկացած մի ժամանակավոր մարմին ընտրվեց: Այդ ժամանակավոր մարմինին հանձնարարվեց կարճ ժամանակամիջոցում հաստատել տալ կոլտընտեսությունը, ներկաներից բացի, ուրիշ չքաղոր և միջակ գյուղացիների ևս կոլտնտեսության անդամ արձանագրել, կոլտնտեսության վավերացումից հետո ընդհանուր ժողով հրավիրել և մնայուն մարմին ընտրել...

Ժողովը փակելուց առաջ Պյուստեմը դյուղացիներին հիշեցրեց իրենց կայացրած առաջին վորոշումը.

— Մենք այստեղից պետք ե մեկնենք մի մարդու նման: Այսոր մենք արդեն ունենք մեր կազմակերպությունը և վերջինին ղեկավար մարմինը: Հետո առաջարկեց շուտ ձի նստել:

Գյուղացիները գոհ եյին յերեսում, վորը ընդհանուրին վերաբերող մեծ նշանակություն ունեցող մի գործ եյին կատարել, և շոապ գնացին ձիերը վերցնելու: Նրանք, վոր ձի չունեցին, նստեցին իրենց հարեվանի ձիու գավակը:

տառները շրջապատող սառցի լեռների հետեւ գյուղից ձի բերին:

Յերբ Սաֆալից ձիավորները դուրս յեկան, իրիկնադեմ եր արդեն:

Արևն իր տաքությունը տալուց հետո, ստում եր, և սառչելիս ուզում եր կանաչ անտառները շրջապատող սառցի լեռների հետեւ պահվել:

Ձիավորների առաջին շարքումն եյին Սաֆալի և Դրնագլի պատգամավորները, իսկ սրանց մեջտեղը՝ Որուջ քիշին: Նրանց հետեւց Պյուստեմը քաշում եր յերիտասարդ և հետեւթար նույնքան կատաղի նժույդի սանձը: Նա իր ամբողջ ճարպկությամբ աշխատում եր զապել իր աև ձին, վոր ուզում եր իր բոլոր ընկերներին հետ թողնել:

Հյումմեթ Ալին և յուրայինները, յերբ
տեսան, վոր Սաֆալվի Գյուղացիները Գյուլի-
դարի հետեւից են յեկել, Խուճապի մատնվե-
ցին: Նրանք ուզեցին դիմադրություն ցույց
տալ, սակայն յերբ մտածեցին, թե այդ գոր-
ծը կարող է վատ վախճանի հանդել, Սաֆալ-
վի ձիավորների առաջ դուրս յեկան և սկսե-
ցին լեզու թափել:

— Այ մարդիկ, ինչո՞ւ յեք նեղություն
քաշել: Մի աղջիկ մի յերիտասարդի համար
ե: Աղջիկ ե: Յեթե այսոր համաձայնություն
չտա, վաղը կհամաձայնի, — ասում եյն և
աշխատում, վոր Գյուլիզարը Հյումմեթ Ալու
մոտ մնա: Այդ ասողներից մեկը Հյումմեթ
Ալու աղջական և բարեկամներից եր: Մի ա-
ռանձին զգուշությամբ աշխատում եյին աղջ-
կան թագցնել:

Իյուստեմն առաջարկեց աղջկա կամքը
հասկանալ: Գիտեր, վոր Գյուլիզարը չեր ու-
ղում Հյումմեթ Ալուն գնալ և այստեղ մնալ:
Հյումմեթ Ալու մարդիկ նախ խուսափեցին
այս առաջարկից:

— Այդպիսի գործն աղջկանից չեն հարց-
նում: Նա յեթե ցանկանա անդամ՝ պատասխան
չի տա, կամաչի:

Սակայն Սաֆալվեցիների վճռական պա-
հանջի վրա նրանք ստիպված յեղան տեղի
տալ: Աղջկան խոսացնելու համար Սաֆալվի
ձիավորներից Որուշ Քիչին, Իյուստեմը և

նրանց հետ յերկու գյուղի պատգամավորներն
ուղղվեցին դեպի Գյուլիզարի պահպաժ տու-
նը:

Գյուղին հատուկ ճաշակով զարդարված,
վերից վար գորգերով և փալասներով ծածկ-
ված, պատի կողքից գունավոր և թափա-
պատ թանձր անկողիների մի անկյունում,
Գյուլիզարը, ինչպես վանդակված թռչուն,
վոր դատապարտված եր հաճույքից զրկվե-
լու, խորը տիրությամբ մտածում եր իր վի-
ճակի մասին:

Նրա մոտ գտնվող կանայք Գյուլիզարին
զբաղեցնելու և հրապուրելու համար գրամա-
ֆոն եյին նվազում: Տիուր յեղանակներով
նվազը փոխանակ Գյուլիզարի մտատանջու-
թյունը ցրելու, ընդհակառակն, ավելի մռայ-
լության մեջ եր ընկղմում նրան:

Գյուլիզարն իրեն զգում եր գերի և դատա-
պարտյալ: Սակայն ի՞նչ եր լինելու այս բան-
տարկության վերջը... Այժմ ի՞նչ ե անելու:
Այս հարցումները նրանից անինա պատասխա-
նի եյին սպասում: Նա մտածում եր, բայց
պատասխան չեր կարող գտնել:

Գյուլիզարի ներկա կացությունն ու հոգե-
բանությունը շատ եր հարմարվում յերգչի
տիսուր և այրող հետեւյալ խոսքերին.

Բարեկամությունը վատ աշխարհում
առասպել ե յեղել
Ա՛Հ, ով բարեկամ, այս ավերակն ինչ
ավերակ ե յեղել,

Այն մարդուն, վոր ինձ բարեկամ
գիտեցի, ո՞վ սիրտ,
ի վերջո հայտնի յեղավ, թե ո՞վ ե
յեղել ինձ ոտար:

Յերբ Սաֆալվեցիները ներս մտան,
Գյուլիզարը նրանց վրա հառեց իր տխուր և
Հուզված աչքերը: Գյուլիզարն իր առաջ
տեսնելով իր համագյուղացիներին՝ սրտա-
պնդեց և ուրախությունից սկսեց լաց լինել:

Որուջ քիշին Հարցըց.

— Գյուլիզար, ի՞նչ ես ասում, համա-
ձայնում ես:

Գյուլիզարը հեկեկալով.

— Ինչու յեք ինձ այդ հարցը տալիս,
ազատեցե՞ք ինձ:

Հետո խոսեց պատղամավորը.

— Վո՞չ, քույրիկ, մենք պետք են գիտե-
նաք, թե Հյումմեթ Ալու կինը լինելու համա-
ձայնե՞լ ես:

Գյուլիզարը վճռականորեն պատաս-
խանեց:

— Յես ել ասում եմ՝ վո՞չ, և չեմ ել հա-
մաձայնի: Յեթե անդամ ինձ սպանելու ել
լինեն, նորից չեմ համաձայնելու:

Գյուլիզարի այս խիստ պատասխանը
վոչ մի կասկած չեր թողնում:

Ինդիրը պարզ եր:

Սակայն Գյուլիզարն ուղեց նորից շարու-
նակել.

— Յես այս վայրենիներից զգվում եմ,
վորովհետեւ... ճնշված սրտի հուզմունքը
խեղդեց նրա ձայնը: Նա իր գլխի թաշկինա-
կով ծածկեց դեմքը և սկսեց սրբել ակամա
հոսող արցունքները:

Գյուլիզարին ազատող գյուղացիներն այլ-
և վոչ մի խոսք չասացին և աղջկա թեղից
բռնած դուրս յեկան:

9

Սաֆալվեցիներն իրենց գյուղն եյին վե-
րադառնում:

Արեւ մայր եր մտել, և յեղանակը՝ ցըր-
տել:

Սաֆալու գյուղի կողմից փչող թեթև ու
զով քամին բանտից ազատած Գյուլիզարին
շնչել եր տալիս Սաֆալու գյուղին հարազատ
ողն ու վողջունում հաջողությամբ վերադար-
ձող ձիավարներին:

Ձիավորները հաճախ ծիծաղում ու խո-
սում եյին, սրանք այսորված ժողովում հավա-
քական տնտեսություն ստեղծելու մասին ըն-
դունած վորոշումը գործնական հունի մեջ դը-
նելու, հողերը վարելու և մշակելու շուրջը զը-
րուցում եյին:

Իսկ Գյուլիզարը Դրնաղլու գյուղի պատ-
գամավորի սպիտակ ձին առաջ քշելով՝ ընկրղմ
վել եր իր գլուխը տանջող խորը մտքերի մեջ:
Նրանից հետ չմնացող համատեղացիներն ու-

բախութախ խոսում ու կատակում ելին, սա-
կայն Գյուլիզարը տարված եր մտքերով:

Իսկ նրան զբաղեցնող խնդիրները բազմա-
խառն ելին: Այս գեղքից հետո նա ի՞նչ եր ա-
նելու: Այժմ տա՞նն եր նստելու, թե՞ աշխա-
տանքը պետք ե շարունակեր: Գյուլիզարը
դիտեր, վոր իրենց գյուղխորհրդի նախադահը
դեպքի մասին հայտնելու յե դատավորին,
դատավարություն և տեղի ունենալու, դա-
տարանի առաջ տեսնելու յե Հյումմեթ Ալու
անամոթ և զգվելի դեմքը, գործը քննվելու յե,
և հանցավորն որենքի համաձայն պատժվելու-
յե: Սակայն սրանից հետո Հյումմեթ Ալու
նմանները պիտի խրատվե՞ն: Հին ժամանակից
մնացորդ այս վատ սովորությունը մեջտեղից
պիտի վերանա՞։ Խնդրի այս կողմը նրան շատ
եր հետաքրքրում և շատ եր տանջում, այդ
պատճառով չեր կարողանում վորոշել թե դրա
համար ինքն ի՞նչ պետք աներ:

Ճանապարհի ընթացքում Ռյուստեմը,
յերբ նույնիսկ ուրիշների հետ եր խոսում,
Գյուլիզարի վրայից աչք չեր հեռացնում: Նա
շարունակում եր Գյուլիզարին դիտել և տես-
նում եր, վոր աղջիկը ծանր մտքից տանջ-
վում ե:

Ռյուստեմը նախ չհամարձակվեց և յեր-
կար մտածելուց հետո վերջապես սկսեց ձին
Գյուլիզարին մոտիկ քշել: Նա Գյուլիզարին
հայտնեց Սաֆալու գյուղի չքավորների ժո-

ղովի վորոշումը՝ տնտեսությունները միաց-
նելու մասին:

Այս լուրը Գյուլիզարին ուրախացրեց:
Կոլեկտիվ տնտեսություններ կազմակերպելու
խոսքերի մեջ նա նոր կյանքի սկիզբն եր տես-
նում և թեվափորվում:

Փոքր և թույլ տնտեսությունների միա-
ցումը և կոլեկտիվ մշակումը Գյուլիզարին
հետաքրքրում եր: Այս նոր գործի ձեւերի և
բովանդակության մասին նա Ռյուստեմին մի
շարք հարց տվեց: Բացահայտ տեսնում եր,
վոր նա կոլեկտիվ տնտեսության իմաստը հաս
կանում ե և մեծ կարևորություն ե տալիս::
Ռյուստեմն այդ բանից շատ գոհ մնաց:

Ռյուստեմը, յերբ նայում եր Հյումմեթ
Ալու վայրենի ճանկերից ազատված Գյուլիզա-
րին, ուրախանում եր և նրա հանդեպ տածած-
սիրո զգացումներից յերջանիկ եր:

Ռյուստեմը հարցրեց Գյուլիզարին թե՝
ուղո՞ւմ և կոյտնտեսության մեջ աշխատել:

Գյուլիզարը հարց տվեց.

— Յես ի՞նչ ձեռվ կարող եմ ձեզ ոգնել:

— Մեր կազմակերպությանը կատարե-
լու յե նաև կուլտուրական աշխատանքներ: Մանավանդ կանանց տան աշխատանքներից
ազատելու, յերեխաների դաստիարակության
համար անհրաժեշտ ե մանկապարտեզ—կար-
ծեմ այլպես են ատում, յես լավ չգիտեմ,—
իսկ զբանք կարդի բերելու համար քեզ նման
մեկն անհրաժեշտ ե:

— Ի՞նչ վնաս ունի: Յեթե ինձ կարիք ունեք և կարող եմ ոգտակար լինել, կաշխատեմ: Գյուլիդարը տեսնում եր, վոր Ռյուստեմը ընտելացել ենոր կյանքի կառուցման մտքին, և գոհունակությամբ աչքերը չեր հեռացնում նրա վրայից:

Գյուլիդարի այս նայվածքը Ռյուստեմին շատ բաների մասին եր մտածել տալիս:

Զիավորները Սաֆալու գյուղին հասել եյին:

Գյուղի գաշտերում սպիտակ բամբակի ծաղիկների մեջ գույնզգույն շորերով կանայք և աղջիկներ բամբակ եյին հավաքում: Հենց վոր նրանք ծիավորներին ու վերադարձող Գյուլիդարին տեսան, բոլորը միասին ուղղվեցին դեպի Դադիր Քիշու տունը: Բոլորն ել շտապում եյին տեսնել Գյուլիդարին, շնորհավորել նրա մորն ու մորաքրոջը:

Գյուլիդարի վերադարձն ամբողջ գյուղին ուրախություն պատճառեց:

— Վերադարձավ, աչքներդ լույս:

— Լույսի մեջ մնաս...

— Բախտավոր լինի:

— Ազնիվ աղջիկ ե, չխաբվեց:

Այս բարի լուրը գյուղի բոլոր անկյուններում լավում եր: Գյուղի ծերերից մեկն ասաց

— Յեթե ցանկանա ամուսնանալ, ահա, Ռյուստեմին կգնա և բախտավոր ել կլինի...

Այս խոսքերն արդարեւ կատարվելիք էրականության նախագուշակություն եյին:

10

Սովալու գյուղի կոլտնտեսությունը հետզհետե զարգանում եր: Զքավոր գյուղացիներից բացի, իրենց կամքով գալիս և կոլտնտեսություն եյին մտնում նաև միջակ գյուղացիները: Նախապես 22 հոգուց բաղկացած կոլտնտեսությունն այժմ 46 անդամ ուներ: Կոլտնտեսության մեջ միացել եյին 26 տնտեսություն:

Կոլտնտեսության հաջողությունների մասին միայն Սաֆալու գյուղում չեր, վոր խոսում եյին, այլև հարեան գյուղերում: Սաֆալուի կոլտնտեսության զեկուցումները բազմից լավել եյին գյուղի կազմակերպություններում, նույնիսկ յերկու անդամ ել լսվել եյին շրջանի կոլտնտեսական խորհրդակցության ժողովում, և նրա աշխատանքները գնահատվել եյին:

Ռյուստեմը կոլտնտեսության զարգացման համար շատ եր աշխատել, բազմաթիվ անդամներ չըջկենարոն եր գնացել, կոլտնտեսության կարիքների համար անհրաժեշտ դիմումներ կատարել, կոլտնտեսության համար ձեռք եր բերել տրակտոր և գյուղատնտեսական այլ մեքենաներ:

Անցյալ գարնանը նա նույնիսկ կոլտընտեսության շինարարության համար տախտակ, յերկարթ և այլ շինանյութեր ձեռք բերելու համար գնացել եր Բագու և անհրաժեշտ նյութերով շինարարությունը ապահովել: Դրա չնորհիվ ել, այժմ շինարարական աշխատանքներն արագորեն առաջ ելին գնում:

Կարճ ժամանակվա ընթացքում կոլտնտեսության ախոռից և չունեարանից բացի, կառուցվեցին նաև 8 շենք: Սաֆալու դյուղի ամենալավ վայրը համարված Գզրլաղի մոտ, չինարի բարձր ծառերով շրջապատված հրապարակում կառուցվեց Սաֆալի կոլտնտեսության առաջին մանկտունը: Այնտեղ կարմանկապարտեղ, մսուր, յերեխաների ճաշարան և այն:

Դյուլիզարի հոգատարության և աշխատանքի չնորհիվ, այնտեղ տիրող մաքրությունը, կոկլիկությունն ու կարգապահությունն արժանացել ելին կենտրոնից յեղած մի շարք հրահանգիչների գնահատությանը, և նույնիսկ նրա նկարը ոռւսերեն և թուրքերեն թերթերում լույս տեսավ:

Ըստ Հանրապես Սաֆալի կոլտնտեսությունն այցելող՝ կենտրոնի աշխատողները վերադառնում ելին այն համոզմունքով, թե այս կոլտնտեսությունն որինակելի յե և այս պատճառով ել, անհրաժեշտ յեղած դեպքում, նրան հարկ յեղած ողնությունը ցույց տալ չելին վարանում:

Կողտնտեսության յուրաքանչյուր հաջողությունն ավելի զարկ եր տալիս յունատեմի գործունեյության: Ամեն անգամ, յերբ նա կոլտնտեսությունների կամ ուրիշների հետ խոսում եր, ասում եր.

Մենք կոլտնտեսություն ենք կառուցում՝ կոլտնտեսությունների լավագույնը, և իրավամբ պարծենում ենք:

Սակայն կոլտնտեսության աճումն ու մեծացումը բոլորի վրա նույն տպափորությունը չեր թողնում: Վո՛չ միայն կոլտնտեսությունն ու նրա զարգացումը չսիրողներ, այլև քայլայումը ցանկացող թշնամիներ ել կային: Նրանց մեջ կային այնպիսիները, վորոնք աշխատում ելին կոլտնտեսության մեջ: Կոլտնտեսության գլխավոր թշնամիներն ելին՝ Յուսուփը, վոր կոլտնտեսության պատճառով ազատվել ու հանվել եր կոռպերատիվի վարիչի աշխատանքից և խանութիզ վտարվելու ժամանակ յուրացել եր 3000 ոռուրլու ապրանք, այդ պատճառով բանտարկվել և հետո յերաշխավորությամբ ազատ եր արձակվել. հետո՝ Դուրբան Քիշու ազա՝ Մուրագ Բեյի յեղբոր տղան-Ալի Յուսուփը, վորի ջրաղացը գրավել եր կոլտնտեսությունը, Զահիդ բեյի տղա Եշրեֆը, Հյումմեթ Ալու ազգականները, վոր Գյուլիզարին առևանգելու և հետը բռնի ամուսնալու համար դատարանի կողմից հինգ տարի բանտարկության ելին զատապարտվել:

Հյումմեթ Ալու և նրա մարդկանց թշնամությունը կոլտնտեսության դեմ լինելուց ավելի, Բյուստեմի դեմ եր:

Ինչպե՞ս չլիներ:

Հյումմեթ Ալու «գլխին յեկած» բոլոր «ղժքախտությունների» պատճառն ո՞վ եր:

Նրանք կարծում եյին, վոր յեթե Բյուստեմը նրա դործին չխառնվեր, Հյումմեթ Ալին Գյուլիզարից ձեռք չեր քաշի: Յեթե Բյուստեմը չլիներ, Սաֆալվի կոլտտնեսությունը չեր պահանջի, վոր Հյումմեթ Ալու գործը քննվի Սաֆալու գյուղում և դատավարության ժամանակ վկաները Հյումմեթ Ալու դեմառդեմ չեյին կանգնի ասելու, թե նրա ասածները սուտ են:

Հյումմեթ Ալին Բյուստեմից քիչ հարված չստացավ:

Մի՞թե «խելապակասի» տղա Բյուստեմի գործունեյության հետևանքը չեր այն, վոր Սաֆալու գյուղում հայտնի Մուրադ բեյի նման մարդկանց տները գրավեցին կոլտնտեսության կարիքների համար: Սաֆալվի որինակին հետևելով՝ Դրնագլու գյուղի վտարութիկ, միամիտ մարդիկը ևս գլուխ բարձրացըին և կոլտնտեսություն կազմելու, Հյումմեթ Ալուն գյուղից վտարելու, նրա գույքերը գրավելու պահանջ դրին: Այս բոլորը մի՞թե Բյուստեմի գործունեյության հետևանքը չեր:

Սամնավորապես դատավարության որերը

վոչ Հյումմեթ Ալու և վոչ ել նրա բարեկամների հիշողությունից կջնջվեն:

Ո՞ւմ հիշողությունից կարող ե ջնջվել կոլտնտեսական գյուղացիների պահանջը, Հյումմեթ Ալուն խայտառակող յելույթները, Փագիր Քիշու հարեւան Որուջ Քիշու պահանջը՝ ծանր պատիժ սահմանելու մասին, և վերջապես Բյուստեմի յելույթը, վոր կոլտնտեսականների ասածների հանրագումարն անելով, շեշտում եր Հյումմեթ Ալու կողմից Գյուլիզարին առևանգեկու քաղաքական և հասարակական մեծ նշանակությունը, և առաջ քշելով իր նախապատրաստած գյուղացիների հուղման բնական լինելը, պահանջում եր գործի մեծության համապատասխան պատիժ:

Կոլտնտեսության թշնամիները, վոր սկըզբում յենթադրում եյին, թե կոլտնտեսությունը շուտով կքայքայվի ու կվերացվի, և այդ ուղղությամբ պետք յեղած տեղում պղբոպագանդ եյին մղում, յերբ տեսան կոլտնտեսության աճումը և զարգացումը, այս գործի քոյքայման մասին հուսակտուր յեղան: Հուսակտուր յեղան, բայց ավելի լուրջ գործի անցան: Յուսուփ բեյի նմանները կոլտնտեսական գյուղացիներին հայհոյելով կոլխոզից գուրս հանելն իր ավելի «նսպատակահարմար» եյին համարում: Հյումմեթ Ալու մարդկանց նման ավելի կատաղիները կոլտնտեսության խոտը և հացահատիկը հրդեհելով, բամբակի

գաշտերում անասուն արածեցնելով վնաս-
սում եյին այն:

Այս բոլորին ականատես կողտնտեսական-
ները, համաձայն Ռյուստեմի առաջարկին,
կոլտնտեսության թշնամիների ցանկը պատ-
րաստեցին և կենտրոնից պահանջեցին նրանց
դլխավորներին դյուզից հեռացնել:

Հանդարտ մի յերեկո յեր: Քիչ առաջ
տեղացող անձրեց յեղանակը ցրտել եր: Յեր-
կինքը ծածկող ամպերի տակից յերբեմն-յեր-
բեմն աստղերը փայլում և թաղնվում եյին:
Չորս կողմը թաղված եր մթության մեջ:

Այդ ժամին ո՞վ եր, վոր Սաֆալու և
Դրնագլու գյուղերի միջև գտնվող ճանապար-
հով արագորեն իր ձին եր մտրակում: Այդ
Մուրադ բեյի յեղոր վորդի Յուսուֆ բեյն եր,
վոր ուզում եր իր ձին թռչունի պես թռչի, և
դրա համար նա իր ձեռքի մտրակով խարազա-
նում եր մինչև վոտքերը քրտնած ձիում:

Յուսուֆ բեյն շտապում եր լուր հասցնել
Հյումեթ Ալիենց, վոր Ռյուստեմը զնացել ե
շրջան, գարնանացանի խորհրդակցության և
այս յերեկո վերադառնալու յե:

Բոլոր գործերի «հիմնական չարիքը» հա-
մարվում եր Ռյուստեմը և վղուց նրան սպանե-
լու վորոշում տրված եր: Այս յերեկո կայա-
րանի և Սաֆալի ճանապարհին նրան զնդակի
զոհ գարձնելը Հյումեթ Ալու յեղբայր Գուդ-
րիդ Ալու համար ի՞նչ դժվար բան եր վոր:

Միայն անրհաժեշտ եր Գուդրիդ Ալու
գտնել և ուղարկել ճանապարհի վրա սպասե-
լու: Նա այստեղ իր գերը կկատարեր: Յուսուֆ
բեյը դրա մասին յերբեք չեր կասկածում: Յեկ
այս ձեռվ ել «պակասամիտ»-ի տղայի սկսած
«ղալմաղալին» մի անգամից վերջ կտրվեր,
վորովհետև Ռյուստեմից ազատվելուց հետո
նրա կառուցածը տակն ու վրա անել և ցըել՝
Յուսուֆ բեյի համար հեշտ եր:

Սակայն Գուդրիդ Ալին պիտի համաձայ-
նի. այն ըոպեյին, յերբ վճռական գործ պա-
հանջվի, արդյո՞ք նա չի վարանի: Այդ ել կա-
խում ուներ Յուսուֆ բեյի հնարամտությու-
նից:

Այս մասին Յուսուֆ ալին նախապես մտա-
ծել և իր պլանը պատրաստել եր: Նա վստահ
եր, վոր գյուղում ունեցած արադի շիշը երեն
մեծապես ոգնելու յե:

Գուդրիդի հիշողության մեջ արծարծել
բանտարկության դատապարտված Հյումեթ
Ալու կրած ծանր հարվածը Ռյուստեմի կող-
մից, նրան վողեվորելու, և հետո «գյավուր»
արադն արդեն իր գործը կտեսնի: Այդ ժամա-
նակ Յուսուֆ բեյն իր Բրառնինդը Գուդրիդ
Ալու մեջքը կապերով, ճանապարհ կդնի: Ավե-
լորդ վոչ մի բան հարկավոր չե: Իսկ յերբ
Գուդրիդ Ալու արյունը գլուխն և խփում, նրա
գեմ վոչ վոք չի կարող կանգնել:

Յուսուֆ բեյն այդ գիտեր: Այսպես ուշ
ժամանակ Յուսուֆ բեյի Դրնագլու գուդր

Երիդին չղարմացրեց: Վերջապես՝ Հյումմեթ Ալու հետ բարեկամություն անող Յուսուֆ բեյը հաճախ յերեկոները, գիշեր ժամանակ զալիս նրա մոտ եր մնում և Հյումմեթ Ալու հետ վորաբի զնում:

Սակայն այս անգամ Յուսուֆ բեյի հուզումն իղուր չեր: Գուգրիդ Ալին այդ հուզման պատճառն իմանալուց հետո սկսեց մտածել: Բացահայտորեն վարանում եր:

Յուսուֆ բեյը վախենալով հապաղումից, սկսեց իր պլանի գործադրությունը: Այն, ինչ չկարողացավ գլուխ հանել իր ուժով, արագի ալկոհոլը կատարեց... Գուգրիդ Ալին բրառնինքը յերբ իր մոտ տեսավ.

— Իյուստեմի մայրը լաց ե լինելու, Փյուլիզարի գլխին սև քող ե գցելու... ջան, բրառնինք, ասելով համբուրեց ատրճանակի սև կոթը:

— Դու այդ մի՛ համբուրի, այս ձեռքե՛րը համբուրի, — ասաց Յուսուֆ բեյը և սեղմեց Գուգրիդ Ալու ձեռքը:

Գուգրիդ Ալին ուշադրությամբ նայեց իր ձեռքերին:

— Սրանք, այս ձեռքերը, առյուծի թաթեր են, — ասաց և ձեռքն այնպես ուժեղ խփեց սեղանին, վոր սեղանի վրայի ամանները շրիկացին:

Գուգրիդ Ալին պատրաստ եր: Յուսուֆ բեյը նրան դուրս բերեց տնից և ճանապարհ դրեց:

— Մեզ «դասակարգային թշնամի» անունը դնողի ձայնը պետք է այս գիշերվանից չլսվի: Յուսուֆն այդ ասաց և գրկելով համբուրեց Գուգրիդին:

— Նրա ձայնը, տե՛ս, այս բրառնինգի գնդակը պիտի լոեցնի, — ասաց Գուգրիդը:

Ընկերները բաժանվեցին: Մեկը գեղի Սաֆալու գյուղը, մյուսը Սաֆալի և կայարանի ճանապարհը բռնելով՝ գիշերվա մթության մեջ անհայտացան:

11

Գիշերվա մթությունն եւ ավելի յերթանձրանում աստղերի մարող զույսերն անթափանցելի վարագույրով ծածկող ամպերից:

Զարգաշ որվա հոգնածությունից հետո մեղմ ու զով գիշերը գյուղացիներին մատնել եր խաղաղ քնի:

Սակայն այս գիշեր յերեք տեղ, քնի քաղցրությունից զրկված և սպասողական վիճակ ապրողներ կային:

Նրանցից մեկը Գյուլիզարն եր, վոր, առաջոտվանից յերեխաների ու կանանց հետ զբաղվելուց հետո, լամպի լույսի տակ կարդում եր «Ալիմջան իբրահիմովի մարդիկ»-ը դիբը և սպասում Բյուստեմի վերադարձին:

Յերկըրդը՝ Դրանգլու գյուղից վերադարձ:

ձող Յուսուֆ բեյն եր: Այս յերեկո իր տեսած գործից գոհ, նա սպասում եր դիշերվան, ճանապարհին Ռյուստեմի սպանված լինելու լուրին և չեր կարող քնել:

Յերբորդը՝ անմիջապես ճանապարհի վրա, թանձր թփի յետեւը թագնված, թշնամու դալուստն սպասող Գուղբիդ Ալին եր, վոր բրառնինդի կոթը միշտ սեղմած՝ ճանապարհին եր նայում:

Ո՞վ դիտեր, թե սրանցից վո՞րն և ուրախանալու, վո՞րը՝ զղջալու և տառապելու, վո՞րը մնալու յե ճանապարհին՝ չի վերադառնալու:

Ճանապարհի կոխվը յերկու դասակարգային թշնամիների գնդակներ եյին, վոր այդ Հարցը պիտի վճռեյին:

Կայարանի ճանապարհին դիշերված լուսաթյունը խանդարող վոտնաձայներն հենց վոր Գուղբիդի ականջին հասան, նա իր թագնված թփի արանքից սկսեց ուշադրությամբ դիտել ձայնը յեկած կողմը:

— Տեսնենք Ռյուստեմն ե, —ասաց և իր ամբողջ ուժն աչքերի մեջ համաքեց՝ մոտեցող ստվերը զանազանելու համար:

Նույնիսկ մութ դիշերված մեջ Ռյուստեմին ճանաչելը Գուղբիդի համար դժվար չեր լինելու: Գուղբիդ Ալին շատ լավ դիտեր նրա հասակը, քայլվածքը, նույնիսկ թեվերի շորժումների ձևը: Միայն անհրաժեշտ եր, վոր

ստվերը քիչ ել մոտենար: Այդ անհրաժեշտ եր, վոր գնդակն իր նպատակին հասներ:

Ստվերը հազայ, և այն, ինչ անծանոթ եր Գուղբիդ Ալու համար պարզվեց: Այդ հազը հատուկ եր Ռյուստեմին: Այդ գիտեր Գուղբիդ Ալին և արդեն նրա համար պարզ եր, որ յեկողը Ռյուստեմն ե:

Գուղբիդ Ալու ատամները կրծտացին, բրառնինդը բարձրացավ—մի բոպե հետո Ռյուստեմի բոլոր հարվածների վրեժն առնելու միտքը նրան սարսուեցրեց: Բրառնինդի տրաքոցն արձագանդեց մինչև հեռուները... Յերկրորդ գնդակն ավելի ուժգին վորոտաց և դիմավորվեց հեռուներից յեկող արձագանքով:

Նորից լուսթյունը վերականգնեց: Գուղբիդ Ալին թփի կողքից նայեց: Քիչ առաջվա ստվերը չկար: Նորից ուշադրությամբ նայեց: Ճանապարհի յեզերքին յերկարած մի բան եր յերեսում:

Գուղբիդը, —այս Ռյուստեմի վիրավորված կամ մեռած մարմինն և լինելու, —ասաց և ուրախացավ: Սակայն մեկեն նրան մոտենալը վտանգավոր եր: Թերևս չի մեռել. այն ժամանա՞կ... յեթե Ռյուստեմն անզեն չե:

Այդ ստվերը սակայն Ռյուստեմը չեր: Ռյուստեմի գետին նետած վերարկուն եր: Իսկ Ռյուստեմը:

Ռյուստեմը Գուղբիդ Ալու վրխած առաջին գնդակից հետո կողքի մի մեծ քարի յե-

տեղը նստած նայում եր: Գուղքիդ Ալու գնդակը միայն նրա ուսուցած վերակուին քսվելանցել եր: Գուղքիդ Ալին տեսավ, վորստվերը չի շարժվում, մեկ-յերկու գնդակ ևս արձակեց: Մի քիչ ել սպասեց:

— Այս գնդակները նրա գործը վերջացրած կլինեն, ասաց Գուղքիդ Ալին և թփի տակից դուրս յեկավ:

Սակայն դուրս գալուն պես իրար հետեխց յերկու գնդակ սուրացին: Այս անդամ յերկու գնդակի ձայնն ուրիշ կողմեր ել արձագանքեց: Այս գնդակները քարի հետեւ հանդարտ և առողջ նստած Բյուստեմի գնդակներն ելին:

Գուղքիդ Ալին միայն՝ վայաման, ասեց և թփի վրա ընկավ: Զեռքի բրառնինդն ընկավ թփի մեջ: Այն թուփը, վորտեղ քիչ առաջ Գուղքիդ Ալին սպասում եր, հիմա կարծեք ուզելով իր վրայից նրան դեն շպրտել, տանջում և նեղում եր, միայն անհավատարիմ բրառնինդն եր պահում:

Գուղքիդ Ալին ուզեց վեր կենալ՝ իր մարմինն ազատելու համար թփի պատճառած տանջանքից:

Սակայն... այլևս ուժ չուներ:

Գիշերը նորից լուս եր...: Յերկու դաստկարգին թշնամիների մահվան կովի ականատես այս գիշերն իր տեսածները պահում եր այդ լոռեթյան մեջ:

Գուղքիդ Ալու ընտրած թփի դիմաց

կանգնած՝ Բյուստեմն ամբողջական զզվանքով դիտում և մտածում եր:

Գուղքիդ Ալու վերջին չունչը վաղուց եր կտրվել: Բյուստեմը վնարեց նրա ատրճանակը, սակայն չտափ: Թուփը պահում եր այն՝ հարցաքննիչների համար....

Բյուստեմը տեսավ, վոր Գյուլիզարը հոգնած սպասել եր իրեն, նա դիշերվա պատահարի մասին խոսելը հետաձգեց հաջորդ որվան, վորպեսզի Գյուլիզարը հանգիստ քնի:

Այդ դիշեր սպասողներից միայն Յուսուֆ բեյն եր մնացել:

Նա մինչև առավոտ չկարողացավ քնել:

Սուալուտ չուտ՝ Գուղքիդ Ալու դիմակը թփի վրա տեսնող Սամարվի դյուզացիները վաղուց այդ լուրը գյուղ բերել և Յուսուֆ բեյին աղատել ելին սպասումից:



ՀՀ Ազգային գրադարան



NL0381851

ԳԻՆԸ 65 ԿՈՊ.

73.895

Հայոց 5



С И М У Р Г
В Р А Г И

Гиз. ССР. Армении, Эривань, 1934 г.